

ՀԱՅ ՍԿՈՒՏԻՔ


ՊԱՇՏՈՆԱԹԵՐՐ
Ա.Ս.Ը.Ս. Ի
ԹԻՄՆԵՐ 1918 Խ



ORGANE
DES SCOUTS ARMENIENS
FONDE EN 1918

"ՀԱΪ ՏԿՈՒՏ"

ՏԱՐԻ ՀՈԿՏ.-ՆՈՅԵՄԲԵՐ. 1930 ԹԻՒ 11-12 OCTOBRE-NOVEMBRE (3^e année)



Փարիզի Տարեկան Մարզատօնին Սկաուտներու, Սկաուտութիներու, Գլոբուշէրի
սանութիներու եւ մարզիկներու տողանդքը:

ՀԱՅ ՍԿԱՈՒՏ
ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ԱՄՍԱՐԵՐԹ

ՏԱՐԵԿԱՆ ԲՈԺՆԵԳԻՆ

Ֆրանսա, Առաջիա, Յունաստան, Պուլկարիա, Իռամանիա..... 35 Փրանք
Միւս երկիրներ..... 2 տոլար

ՀԱՏԼ Յ ՅՐԱՆՔ

(ՎԵՅԱՐԱՐԻ ԶՈՒՆԵՐԻ)

Պարզ նամակ, յօդուած, նկար, թերթ, գիրք եւայն դրկել հետեւեալ հասցեին

Revue HAI-SCOUT, U. G. Arménienne

1, Rue Saulnier, Paris IX

Դրամ, ապահովագրեալ նամակ, չէք, մանտափոստ դրկել գանձապետին՝ հետեւեալ հասցեով:

Mr. H. Zahrédjian, 53 Faub. Montmartre, Paris IX

Հ. Ա. Ը. Ա. Ռ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՀԱՍՑԵՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ. Mr. Arshak Sahakian c/o Arménia press, 247 E. 26th. St. New-York City (U. S. A.):

ՌՈՒՄԱՆԻԱ. «Homenetmen» 27, Bld. Carol, Bucarest I (Roumanie):

ՊՈԲՈՒՐԻԱ. Missag Parsehian, 21, Rue Tigravskaya, Plovdiv (Bulgarie):

ՅՈՒՆԱՍՏԱՆ B. Sarkissian, 42 rue Filinos, Le Pirée (Grèce):

ՍՈՒԻՏԻԱԼԻԲԱՆԱՆ Dr. A. Bezdjian, A. U. B. Hospital, Beyrouth (Gr. Liban):

ՊՈՐՍԿԱՍՏԱՆ S. Tourian, Tauris, Perse (via Moscou)

ԵԳԻՊՏՈՍ «Homenetmen» c/o S. Bulbulian, P. O. B. 1903, Le Caire (Egypte)

ԱՐԺԱՆԹԻՒ Union Gén. Arménienne de Culture physique et de Scoutisme. calle Jufra 33. Buenos-Aires (Argentine):

ՊՐՈԶԻԼԻԱ. Union Gen. Arménienne de Culture physique et de Scoutisme. rue Pagé, 9-Sobrado, Filial: Sa' o-Paulo (Brasil)

ՖՐԱՆՍԱ U. G. Arménienne de Culture physique et de Scoutisme. 1. Rue Saulnier, Paris 9e.

Հայոցներ պիտի ուսնք ուրիշ մասնաճիւղերու եւ շրջաններու հասցեները:

ՀԱՅ ՍԿՈՒՐԻՑ

ՊԱՇՏՈՆԱԿԵՐ
R. U. C. U.
ՀԱՌԱԾԱԿ 1918 թ.

ORGANE
DES SCOUTS ARMÉNIENS
FONDÉ EN 1918

"ՀԱՅ SCOUT"

Գ. ՏԱՐԻ ՀՈԿՏ. ՆՈՅ. 1930

№ 11-12

ՕԿՏՈԲՐԵ-ՆՈՎԵՄԲՐԵ (3^{րդ} անուն)

ՀԱՅ ՈՒԺԻՆ ՏՕՆԸ

Իրական հպարտութեամք եւ ոգեւորութեամք կ'արձանագրենք այս թիւին մէջ, մարզատօններու հաշուետութիւնը:

Այն թուանշանները որ կուտանք հոս, պէտք է գրաւեն ըոլորին ուշադրութիւնը, անոնք ցոյց կուտան հայ ուժին չափանիշը՝ ապրելու ընդունակութիւնը:

Վրայ տալէ վերջ մեր ազգային իրաւունքները եւ մեր անկախութիւնը, պէտք էր միջոցներ ձեռք առնել փրկելու համար մնացորդը՝ շրջապատուած շատ մը վտանգներով, որոնցմէ մեծագոյնն է նոր սերունդին ֆիզիքական գոյութեան եւ առողջութեան պահպանումի ինդիրը, այն սերունդին որ, վաղու ձեռք պիտի առնէ այս ժողովուրդին զեկը:

Հ. Մ. Հ. Մ. ը, իր համազգային ծրագրովը այդ միջոցներէն կարեւորագոյնն է, եւ որքան ուժ տանք ու գուրգուրանք անոր վրայ այնքան լաւ ըմբռնած կը լանք ազգային շահը: Ան՝ իր թեւերը տարածած է Ամերիկայէն մինչեւ Յունաստան, Եգիպտոս, Ֆրանսա, Պուրիա, Սուրիա, Ռումանիա, Պարսկաստան: Անոր գրօշին տակ կայ երիտասարդութիւն մը ջղապինդ եւ հաւատաւոր վաղուան համար, որուն կրտկներուն տակ կը թնդայ օտար հողը՝ հայեցի արձագանգով մը:

Տեսէ՞ք, հոս Փարիզ, հոն Աթէնք ու Սելանիկ, Գանիրէ ու Հելիոբոլիս, Պուլկարիա իր տասը քաղաքներով հայ երիտասարդութիւնը լազուկները վե՛ր, կ'ուխտէ հաւատարիմ մնալ իր ազգային աւանդութիւններուն, պատուոյ խօսքը կ'արտասանէ յաղթելու եւ ապրելու իբր մարդ եւ իբր ազգ:

Կը լսէ՞ք անոնց քայլերու Ռիթմը, տողանցքն է այն հայ երիտասարդութեան, որուն մէկ ծայրը եգիպտոս է, իսկ միւսը Փարիզ կը համնի, ըոլորը նոյն դրօշի տակ, ամէնքը մէկ իտէալով քայլ կը նետեն, հայ գրօշը կը ծածանի անոնց վրայ, ճաճանչելով երեք պատգամ՝ ՊԱՅՔԱՐ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ եւ ԱՇԽԱՏԱՆՔ:

Կը լսէ՞ք սրտերու զարկը հայ երիտասարդութեան որ, միջոցներու մէջէն կը սուրայ կուգայ, միանալու եւ մէկ արձագանգի վերածուելու համար. . .


Ո՞ր հայն է այն, որ այս սրբազն տեսարանին առջեւ անտարբեր եւ անշարժ համրիչ կը քաշէ, ո՞րն է այն երիտասարդը որ այս նուիրական ժամուն կը յօրանջէ՝ մգլուտած սրճարանի մը անկիւնը . . .

Պատուի՛ առէ՞ք բոլորդ անխափիր, հայ երիտասարդութիւնն է որ կ'անցնի աշխարհի մարզագաշտին վրայէն, զինուած պողպատէ բազուկներով եւ ապրելու կամքով:

Տօնն է այսօր հայ բազուկին եւ ուժին:

Պատուի՛ առէ՞ք:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔ



ՄԱՐՍԻՆԻԱ. — Գայլի ինքները դրօշի պատուի ատեն եւ սկառատներու մարզանքը բացօդեայ:

ՄԻԶԱԶԴԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

**ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ Պ. ԹԱՐՏԻԷԾ
Կ'ԱՅՑԵԼԵ «ՍԿՈՒՏ ՏԸ ՖՐԱՆՍ»Ի
ԲԱՆԱԿԵՏԵՂԸ**

Ֆրանսական սկառատներու Փարիզի եւ շրջանի բոլոր խումբերու ներկայացուցիչները հաւաքուած էին Scouts de France բանակատեղին, յարդանքի համար Հայր Cornette որ ստացաւ Պատոյ Լեգէնի խաչը, վարչապետ՝ Պ. Թարտիէօի ձեռքէն:

Հայր Cornette, Սկուտ տը ֆրանսի Միութեան ընդհանուր պետն է, եւ հոգին է եղած ֆրանսական Սկուտ. Դաշնակցութեան որուն նախագահը և ընդհ. պետն է Մարաշախտ Լիօթէ և Ընդհ. քարտուղարը Պ. Հ. Կէրո:

Այս հանդիսաւոր արարողութեան առթիւ Պ. Թարտիէօ, ի մէջ այլոց ըստաւ:

«Պէտքն բառէլի այս ազնիւ եւ շինիչ գործին առջեւ ամէնքս երախտապարտ ենք. կառավարութիւնը իր շնորհակալութիւնը յայտնեց արդէն հայր Քօրնէթին լէժիոն Տ'օնէուփ խաչով, ի վարձատրութիւն իր տարած հսկայ աշխատանքին եւ երեք Միութիւններու դաշնակցութեան գործը գլուխ հանելուն համար: Միութիւնը ԱԶԻՒՆ Զօրութեան նշանն է: Ուժի Միութեան իսկ ՏիԱՐՈՒԹԻՒՆԸ ԲԱԺԱՆՈՒՄԻՆ են ԱՆՁԱՑՈՒՄԻՆ Հեծ է:

«Կը խնդրեմ բոլոր ներկաններէն որ լաւ տպաւորեն իրենց մտքին մէջ այս երկու նախադասութիւնները եւ ըստ այսմ աւելի ուժգնորէն իրար փարած, ձեռք ձեռքի տուած յառաջանան, սկառատական վեհ ճանապարհէն, որ ազգին ազնուացման, յառաջդիմութեան, իրար սիրելու ու բոլոր ժողովուրդներուն իետ համերաշխաբար ապրելու ճանապարհն է :



ՓԱՐԻԶԻ ՍԿԱՌՈՒՑԻՉԻՆԵՐԸ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԵՋ

«Շատ լաւ կը յիշեմ որ, 1914ին հազիւ 7000 սկառուտներ ունէինք, եւ այսօր այդ թիւը հնգապատկուած եւ հասած է 35 հազարի»

«1925ին Ազգերու դաշնակցութիւնը պարտադրեց իր անդամներուն, օգնել ամեն երկրի մէջ սկառուտական շարժումին, որովհետեւ իոն կը տեսնէր ապագայ խաղաղութիւնը, 1928ին, Պ. Էրիօ (այն ատենուան վարչապետ) համալսարաններու վարիչներուն նոյն բանը ըրաւ, 1929ին Պ. Փուանգարէ (հանրապետութեան նախկին նախագահը) երեսփոխանական ժողովին առաջարկեց պիտոնէ մը, ֆրանսայի սկառուտներուն ձեմքորիին մասնակցութեան համար, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ, եւ ամէնք հպարտ ենք մերիններուն փայլուն յաջողութեանց համար»:

«Իսկ ես ինքս ուրախ եմ որ, ժամանակին մեծապէս օգտակար եղայ սկառուտիմբապետներու դպրոցին հիմնադրութեանը *Carryyի մէջ*, ուրկէ այսօր սկառուտիզմը սեծապէս կ'օգտուի»:

«Շատ դժուար է սկառուտիսմին սահմանում մը տալ, անոր համար որ սկառուտիսմը անգլիացիները ստեղծած են, եւ ոեւէ սահմանում մը չունի, մէկ խօսքով անգլիական ամեն բան առածգական է»:

«Սակայն եւ այսպէս, սկառուտիսմը, ո՞չ

շետաքրքրական ուստահութեան մը»

ՍԿԱՌՈՒՑՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ԱՄԵՐԻԿԱ

Մինչեւ 1930 Յունիս ամսոյ սկիզբը, Միացեալ Նահանգներու սկառուտական շարժումը որ կը զործէ Boys Scouts of America անուան տակ, կը հաշուէ մէկ միլիոն սկառուտ: Նախանձելի թիւ մը որ բաղդատութեան դնելով Ամերիկայի բնակչութեան թիւին հետ, կուտայ իւրաքանչիւր 10 պատանիի դէմ մէկ ըսկառուտի համեմատութիւն մը»:

Պատանիներու այս հսկայ շարժումը, կը հաշուէ այսօր Ազգանտեանէն ան-

զինուորական նախապատրաստութեան դպրոց է, զոր շատեր կը կարծեն, եւ ոչ ալ աթեթիզմ է, ինչ որ ուրիշներ կը կարծեն:

«Այնուամենայնիւ այդ բոլորին խառնուրդ մըն է եւ մանաւանդ, կեանքի եւ քաղաքացիութեան արիեստին պատրաստութեան հրաշալի միջոց մըն է»:

Պ. Թարտիէօ վերջացնելով իր խօսքը կրկին սկառուտական դաշնակցութեան յանձնարարեց որ, աւելի ամուր սեղմեն իրենցեղայրական կապերը, աւելի վրատահօրէն իրարու միանան, ազգին գերազոյն շահերուն համար: Ժ. Մ.

դին, ընդհ. աշխարհի սկառուտներու թիւին մէկ երրորդը:

Յաճախ հարց դրաւած է թէ այս շարժումը ի՞նչպէս մուտք գործած է Միացեալ Նահանգները: Հետաքրքրական է պատմոթիւնը: Ամերիկա՝ Անգլիացի գայլիկի մը գործունէութեան կը ուզարտի այս շարժումը, ահա թէ ինչպէս:

Յունվարի 9, 1910ին ամերիկացի մեծահարուստ առեւտրական Մր. W. Boyce գործով Լոնտոն կը հասնի: Օդը ըստ սովորականին սաստիկ մշուշապատ էր: Վաճառականը վիքթօրիա կայարանէն դուրս ելլելով ծայր աստիճան շուարած չորս կողմը կը դիտէր, տատամելով չէլ կրնար որոշել իր բոնելիք ճամբան, երբ յանկարծ փոքրիկ մանչուկ մը կը ներկայանայ իրեն եւ կը հարցնէ.

— Կրնա՞մ ձեզ օգտակար ըլլայ:

Օտարականը որ այդ պահուն ամէնափոքր օդնութեան մը իսկ կը կարուտէր, սիրով կ'ընդունի մանչուկին առաջարկը որ կ'առաջնորդէ զինք սլանդոկ մը:

Վաճառականը, ընականաբար նարծելով թէ գործ ունի տղեկի մը հետոր, այսպէս պղտիկ ծառայութիւններով օրապահիկը կը հայթայիթէ, ձեռքը մէքենաբար զրպանը կը տանի, ազնիւ պղտիկին վարձատրութիւն մը ընելու համար, սակայն մեծ կ'ըլլայ զարմանքը երբ այս վերջինը հպարտութեամբ կը մերժէ առաջարկուած վարձատրութիւնը, ըսելով.

— Պարոն ես զայլիկ եմ:

— Ա՛ն, կ'ըսէ Ամերիկացին, ի՞նչ է որ դայլիկը:

— Դայլիկը երիտասարդ սկառումըն է.

— Սկառում մը:

— Եթէ աւելի մանրամասնութիւն կ'ուզէք, վաղը եկէք իմ պետս տեսէք...

Երեք շաբաթ յետոյ ընդհ. Պէտ Լորու Պէտրն Փառըլի հետ երկար տեսակցութենէ մը վերջ Մր. Boyce կը վերադառնայ Ամերիկա իր հետ տանելով բազմաթիւ հրահանգներ, զիրքեր և ձրա-

զիրներ, եւ Շիքակօ հասնելուն պէս կը հիմնէ առաջին սկառուտական խմբակցութիւնը:

8 Փետրվար 1910ին արդէն հիմնուած էր «Boys Scouts of America»:

Ոչ մէկ խանուածք չէր կրնար աւելի լաւ ըմբռնել սկառուտիզմը քան Ամերիկեանը: Բանակում, մազլցում, անտառաբանութիւն, բոլոր ասոնք ամերիկացի տղոց արեան մէջ կային, որով ըսկառուտութիւնը իրենց թուեցաւ բարոյապէս, ինչպէս նաև սբորի տեսակէտով կատարեալ մեթու մը: Շարժման սկիզբէն իսկ կառավարութիւնը զայն նկատեց իսկական ազգային շարժում, եւ իբր հանրային օգտակարութեան կազմակերպութիւն մը, վաւերացուց զայն երկու տարի վերջ:

Նախազահ Վիլսըն ընդունեց անոր Պատուոյ Նախազահութիւնը: Անկէ ի վեր իրարու յաջորդող բոլոր նախազահները իբր աւանդութիւն շարունակարար ընդունեցին այս տիտղոսը:

Արդէն երբ նկատի առնենք շարժումին ստացած բարոյական օժանդակութիւնը, ամէն դասակարգի պատկանողանձնաւորութիւններէ, ելեւմտազէտներէ, եւ լրազրողներէ, կրնանք որոշ գաղափար մը ունենալ անոր օգտակարութեան եւ բարձրութեան վրայ:

Թարգ. Վ. Թ.



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Հ. Մ. Բ. Մ.ի Սկառուտական Յանձնախումբը տեսնդադիրն զործունէութեան մէջ է այս վերջին ամիսները:

— Այս տարի երկու երիտասարդներ Մ. Սահակեան եւ Մ. Սերոբեան, զրկուեցան Տարք Միջազգային Սկառուտական դպրոցը պատրաստուելու համար իր մասնագէտ սկառուտներ: Մեր տղաքը լայն ծանօթութիւն տուին Հ. Մ. Բ. Մ.ի տասնեակ տարուան սկառուտական զործունէութեան վրայ. ուսանողները լաւ պաշարով վերադարձան Փարիզ, եւ մեկնեցան ծովեզերք հանգստանալու, ուրկէ անցան Անգլիա օրուան մը համար:



Սկառուտական Յանձնախումբը իր վերջին նիստերուն մէջ տուաւ կազմակերպական որոշումներ եւ կարգադրութիւն այսպէս՝

«Փարիզի եւ Շրջանի Խմբապետ» (Commissaire Régional) աստիճան տրուեցաւ Պ. Հայկազ Արէլեանի:

2.— Խմբապետի աստիճան ստացան Ս. Սերոբեան (Մարտէլ), Կ. Կարապետեան (Պուա Գոլոմպ), Օ. Լորէնեան (Մէվրան): Փոխ Խմբապետի աստիճան՝ Մ. Սահակեան (Պուա Գոլոմպ), Պ. Դաւիթեան (Ալֆորդիլ): Պատասխանատու վարիչ նշանակուեցան, Վալանթէն Սարածեան՝ Պելլիլի գայլիկներուն, Զարեհ Ղարիպեան (Սէն թ' Ռւէն), Վահէ Մանուկեան Անկիէնի Երեցներուն:

3.— Վկայեալ սկառուտի աստիճան տրուեցաւ վարիչ-առաջնորդ Աւետիս Տիրկէրեանի:

4.— Երէցներու խորհրդատու խմբապետ անուանուեցաւ Արտաշէս Պէրպէրեան:

5.— Վաւերացուեցան, Փարիզի եւ Ալֆորդիլի Երէցներու Ա. Վաղանզը, Գոլոմպի գայլիկներու հոյլը, Անիէրի սկառուտական խումբը:

6.— Կազմութեան ձեռնարկուեցաւ, Խիթ-լէ-Մուլինոյի, Սէն թ' Ռւէնի, Վէլիէլ-լո-Պէլի, Մէվրանի, Վէնսէնի, Թոնիի եւ

ԹԱԹԱՐ ՓԱԶԱՐՁԸԴ

Ամբան եղանակին մեր սկառուտական խումբը լաւ զործունէութիւն ունեցաւ, կանոնաւոր արշաւներ ու բանակումներ: Մեր սկառուտներէն 16 հոգի երկրորդ կարգի քննութիւն անցուցին յաջող կերպով ինչպէս եւ իրենց խոստումը եկեղեցւոյ բակին մէջ, ներկայ էին, սոյն հանդէսին, պուլկար սկառուտներ ալ:

Մեր մասնակցութիւնը բերինք Հ. Մ. Բ. Մ.ի Շրջ. Վարչութեան կողմէ սարքուած նաւսարդէան խաղերուն, նոյնապէս մեր խումբը զրկեց բանակումի դպրոցը իբրև աստիճանաւորներ խմբապետ Մինսա Մինասեանը, աքելլա Վահրամ Շահանուշեանը, խմբակի տուաջնորդ Օննիկ Միքայէլեանը: Այս դասընթացքը կազմակերպուած էր Պուլկար Սկառուտական Բնդէ, Խորհուրդի կողմէ, Սօֆիայի մօտ գեղեցիկ վայրի մը մէջ:

Սկսած ենք եռանդուն զործի, ամէն կիրակի տեղի կ'ունենան կանոնաւոր հաւաքրյթներ, գասախօսութիւններ, մարզանք, նաև ամէնէն կարեւորն է, հայերէն գասաւանդութիւն, որուն մէծ ուղղութիւն կը հետեւին:

ՍԿԱՌԻՑ

Բէնսիի սկառուտական եւ զայլիկներու խումբերը:

Յանձնախումբը պիտի աշխատի ձըմեռը օգտակար կերպով անցնելու սկառուտներու համար, այս նպատակով կազմակերպեց գիշերային եւ կիրակնօրեայ դասւխօսութիւններ, ազգային պատմութեան, հայ լեզուի, առողջապահութեան և սկառուտական-մասնագիտական նիւթերու վրայ:

Ուժ պիտի տրուի սկառուտունիներու կազմակերպութեան զործին, զոր ձեռք առաջ են Բնդապապեան քոյլերը մէծ եռանդով:

Յառաջիկայ տարուան սկառուտական եղանակը պէտք է ըլլայ Հ. Մ. Բ. Մ.ի համար խիստ արդիւնաւոր շրջան մը:

Երջ. Սկառուտական Խորիուրդ

ՀԱՅ ՄԱՍԻՆԸ Հ. Մ. Բ. Մ. Բ. ՄԱՍԻՆ

«Հ. Մ. Բ. Մ. Բ. ՉՈՒՐՃ» Խո-
րագրով հետեւեալը կը զբէ Սօ-
ֆիայի «Արաքս» թերթը:

Տխուր եւ աւելի քան անշարժ է գա-
ղութահայ կեանքը: Ներքին աղմուկ և
փոթորիկներ բաժակ մը ջուրի մէջ՝ որ-
քան կուզէք, բայց լապտերով պէտք
է վնատել կինդանի գործեր եւ կեն-
սունակ կազմակերպութիւններ:

Մեր լճացած կեանքին մէջ, յատկա-
պէս մեր նորահաս երիտասարդութեան
համար, շարժուսի, ոգեւորութեան, եւ ե-
թէ կ'ուզէք, հոգիով եւ մարմնով ընտիր
հայ մնալու լաւագոյն ասպարէզներէն
մէկն է Հ. Մ. Բ. Մ. Բ.: Միութիւն մը որ
ոչ թէ պուլկարահայ այլեւ ընդհանրա-
պէս վերջին տասնամետի մեր հանրային
կեանքին սէջ իր բեղուն եւ պատկառելի
անցեալն ու նշանակելի դերն ունի:

Կազմուած մեծ եղեռնէն անմիջա-
պէս յետոյ եւ լիեծ կղեռնէն վերապրող
սերունդին նախաձեռնութեամբ, Հ. Մ.
Բ. Մ. Բ առողջ, հանրօգուտ ու ամէնուն
սրտին խօսող իր նպատակներով եւ մա-
նաւանդ իր կորով ի եւ մեղրուածան գոր-
ծունէութեամբ, առաջին իսկ առթիւ
իր շուրջը հաւաքեց մեր երիտասարդու-
թեան ամէնէն կենսունակ տարրերը եւ
արդարօրէն, արժանացաւ մեր ամէն խա-
փ հասարակութեան ջերմ գուրգուրան-
քին: Կարելի է ըսել թէ մեր երիտա-
սարդութիւնը, հայկական ուրիշ ոչ մէկ
կազմակերպութեան մէջ այնքան ստուար
շարքերով, գունդ գունդ եւ գիտակցօ-
քէն իր գործոն անդամակցութիւնը բե-
րաւ, որքան Հ. Մ. Բ. Մ. Բ. մէջ: Համրա-
ծանոթ փաստ է, թէ այսօր ալ, գաղու-
թահայ մեր գրեթէ ընդհանուր անշար-
ժութեան մէջ, մեր գրեթէ ամէն մէկ,
նոյնիսկ փոքրաթիւ ու աննշան գաղութը,
Հ. Մ. Բ. Մ. Բ մասնաճիւղն ունի, որու շուրջ
հաւաքուած է մեր երիտասարդութեան
ծաղիկ մասը: Ստոյգ վիճակագրութիւն
եւ ընդհանուր կապ այդ մասնաճիւղե-
րուն միջեւ, կը պակսի դժբաղդաբար,
բայց անկասկած է թէ Հ. Մ. Բ. Մ. Բ գոր-
ծին եւ դրօշակին շուրջ, արտասահմանի
մէջ, հաւաքուած կարելի է գտնել տաս-
նեակ մը հազար հայ երիտասարդու-
թիւն, Սուրբայէն մինչեւ Պալքաններ եւ
Եւրոպայէն սինչեւ շիւսիւսային եւ Հա-
րաւային Ամերիկաները:

Թուելէ վերջ Պուլկարիոյ կազ-
մակերպութեան գործունէութիւնը
և մասնաճիւղերու ցանցը կը շա-
րունակէ:

Միայն այս թերթը վերջին մէկ ամ-
սուան ընթացքին, տասնեակ մը անգամ
արձանագրեց Հ. Մ. Բ. Մ. Բ մասնաճիւղնե-
րու եռանդուն գործունէութիւնն ու ա-
նոնց կազմակերպած իրապարակային
ձեռնարկները, որոնք ամէն տեղ ալ, մեր
հասարակութեան վառ հետաքրքրութեան
գուրգուրանքին եւ հաւաքական աջակ-
ցութեանը արժանացած են:



Փարիզ Պէլվիլի եւ իսի լէ Մուլինոյի
սկառտական խմբակը

**Աթէնքի «Նոր Օր» թերթը կը
զբէ.—**

Հ. Մ. Ը. Մ.ի կեդր. Վարչութիւնը հրատարակութեան տուաւ իր եռամսնեայ հաշուեկշիռը: Պարագայ մը որ յանձնի կ'անտեսուի: Հրապարակային հաշուետրութիւնը լաւագոյն միջոցն է տուեալ միութեան պրոպականուր կատարելու, միւս կողմէ արգելք կը հանդիսանայ սովորական խծբանքներու:

Կեդրոնը եւ թէ մասնաճիւղերը, դուրսէն կատարուած օժանդակութիւններուն գոնէ հաւասար գումարներ հայթայթելու են, իրենց սեփական աշխատանքով. այս կերպը եթէ պարտադիր ըլլայ, նիւթապէս թէ բարոյապէս լուծւած կ'ըլլայ արծարծուած հարցը:

Հ. Մ. Ը. Մ.ի կեդր. Վարչութիւնը Ներկայիս կը գտնուի կարող եւ փորձառու ծեռքերու մէջ եւ իրենցմէ կ'սպասւի աւելի մեծ գործ: Աթէնքի թաղերու աշխատանքի մանրամասնութիւնը առաւելապէս պիտի ծգուի տեղական ուժերու որպէսզի կեդրոնը կարելիութիւն ունենայ իր հանգամանքը արժեցնել: Ուրախալի է որ այս տարի թրակիոյ եւ Մակեդոնիոյ շրջանն ալ կազմեց մասնաճիւղեր, Սելանիկէն յետոյ գաւալա, Տրամա: Մարզական միութիւններ կան քսանթի, կիւմիւլճինա, Տէտէ Աղան որոնք սիրով պիտի ուզէին ուրիշներու նման Հ. Մ. Ը. Մ.ի մեծ ընտանիքին մաս մազմել, եթէ իրենցմով հետաքրքրուողներ գտնուէին: Նոյնպէս սեղմ յարաբերութիւն ունենալու է ուրիշ գաղութներու մէջ գործող Հ. Մ. Ը. Մ.ի կեդր. Վարչութիւններուն իետ: Պէտք է կազմուի որ եւ է գաղութի մէջ ընդի. Կեդրոն մը, ան միացնող օղակ մը ըլլայ, արտասահմանի բոլոր հայ մարմնակրթական միութիւններուն սիցեւ:

Հ. Մ. Ը. Մ.ականները պէտք ունին մեր հանրութեան ջերմ հետաքրքրութեան: Հայ ծնող քները ցոյց պիտի տան իրենց զաւակներուն մարզադաշտը եւ ըսկառտական բանակատեղին: Գիւղերու մէջ, լեռներու վրայ, ատենօք մեր ժողովուրդը կ'ապրէր ու կը վայելէր ընու-

թեան ազդեցութիւնը իր ֆիզիքականին ու բարոյականին վրայ: Ներկայիս խճողուած քաղաքներու մէջ, մեր տղաքը ենթակայ են հազար ու մէկ մոլութիւններու: Ցեղը կ'այլասերի ֆիզիքապէս, որուն անմիջապէս կը յաջորդէ բարոյական քայլայումը, եթէ չգիտնանք մասնաւոր ուշադրութիւն դարցնել նոր սերունդի մարմնակրթանքին:

Յտար ազգերու մէջ, զինւորական չարքաշ կեանքը, մեծապէս կ'ազդէ անոնց երիտասարդութեան ֆիզիքական աճումին: Մինչդեռ անբաւարար նկատելով ասիկա, հսկայ պիտնէններ կը յատկացնեն մարմնանրմանքի շարժումին ինպատ:

Կրկնակ պատճառներ ունինք մասնանաւոր ուշադրութիւն դարձնելու հայ մարմնակրթանքի գործին: Հ. Մ. Ը. Մ.ի դեկավարներուն իետ, հանրութիւնն ալ պիտի գիտնայ քաջալերել հայ մարմնակրթական ձեռնարկները եւ անոնցմով լրջօրէն սբաղըւիլ:

Մարափլիոյ «Հայ Սիրտ»ը կը զբէ.—

Կիրակի իրիկուն Հ. Մ. Ը. Մ.ի ժիր տղաքը հաւաքուած էին իրենք իրենց հաշշոյն ուրախանալու իրենց ծեռք բերած փայլուն յաջողութեան համար, որովհետեւ մեծ զրիաքերութեան գնով մեր պատուական տղաքը հասած են ֆութպոլի առաջին դասակարգին, ինչ որ պզտիկ բան չէ այսքան խոշոր ոստանի մը մէջ:

250է աւելի հայ պատանիներ ու երիտասարդներ, խմբուած ազնիւ դրօշի մը ներբեւ, կ'աշխատին լրիկ մնչիկ իրենք զիրենք բարձրացնելու եւ իրենցմով ազգին անունն ալ բարձրացնելու:

Իրենց սկառուտական կազմակերպութիւնն ալ մեծ զարկ ստացած է վերջերս. արդէն 50ի կը համփ ասոնց թիւը, կէսը զգեստառուած, կէսը դեռ ոչ:

Խեղճ տղաք. համեստ բանւորներ ըոլորն ալ, չունին նիւթական լայն միջոցներ, կարենալ տոկալու համար պահանջուած ծախըերուն: Սկառուտները պէտք ունին զգեստի, ֆութպոլիսաները սեփական դաշտի:

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Փորձ տ'իմալիի Հ. Մ. Բ. Մ.ի մասնամիւղը իր փարչական ու սկառուտական կազմով 12 չոլտ. կիրակի օր փութացած էր ջօր Անդրանիկի գերեզմանը, ուր տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտոն մը որուն ներկայ էին բացի Հ. Մ. Բ. Մ.ի փորձ տ'իմալիի մամնանիւղին վարչական եւ սկառուտական կազմին՝ հերոսին ընտանեկան պարագաները, եւ ճասին գարանիսարի Հայրենակցական լիիւթեան ներկայացուցիչը: Իր պարզութեան ու անշքութեան մէջ հոգեհանգստեան պաշտոնն ու յարգանքի ցոյցը յուզիչ էր:

Հոգեհանգստեան պաշտոնը կատարելէ վերջ, Ասլանեան քինյ. պատմեց թէ ինչպէս իր Անի ուղեւորութեան սիջոցին տեսած էր բագրատունեաց Խագաւորներու գերեզմանները, որոնց վրայ արձանագրութիւններն դարերու ընթացքին աւերուած էին, ու այսօր այդպէս կը գտնէր հերոսին գերեզմանը՝ դառնալով սկառուտականիներուն, որոնք հերոսին գերմանը կը շրջապատէին, ըստ անոնց: — «Պէտք չէ մոռնալ Անդրանիկը եւ ուշտել անոր գերեզմանին վրայ թէ, իայ ծնած ենք եւ եւ իայ պիտի մեռնինք:»

Ցեսոյ խօսք առնելով Հ. Մ. Բ. Մ.ի փորձ տ'իմալիի մամնանիւղի ատենապետ Պ. Արամեանց, կորովի բառերով խորապէս յուզեց ներկաները:

Հ. Մ. Բ. Մ.ի փորձ տ'իմալիի մամնանիւղին կողմէ ծաղկեփունջ մը դրուեցաւ Անդրանիկի գերեզմանին վրայ սա վերտառութեամբ «Մեր հերոսին՝ Անդրանիկին»:

Ինչպէս ասկէ առաջ գրուած էր գերեզմանը անհանաչելի դարձած ըլլալով խաչ մը գետեղուեցաւ, որուն վրայ իայերէն արձանագրուած էր «Անմահ հերոս Զօր. Անդրանիկ. 1865-1927»: Իր ընտանեկան պարագաները նոյնպէս ծաղկեփունջ մը դրին:

Ցուսանք թէ այսուետեւ, Անդրանիկ պիտի ունենայ իր յիշատակը տեւականացնողներ, իր անունին արժանի մահար-

չայկական բարեգործական Ըընդհ. Միութեան հիմնադիր նախագահին՝ Պ. Պողոս Նուպարի ցաւալի մահէն վերջ, Միութիւնը խիստ զնահատելի զործ մը կատարեց, նախագահութիւնը յանձնելով Պ. Գալուստ Կիւլպէնկեանի:

Այս առթիւ Հ. Մ. Բ. Մ.ի Վարչութիւնը նամակու մը շնորհաւորնած էր նորընտիր նախագահը, որուն սիրալիր տողերով պատասխանաց է Պ. Գ. Կիւլպէնկեան:

Ճան մը Փէր Լաշէզի այնքան փառաւոր գերեզմաններուն քով, նշանաւոր անհատներու կարգին, մինչեւ այն օր երբ իր սրբազն աճիւնները երթան հանգչի մայրենի հողին մէջ: ⁽¹⁾

Մ. Տէր-ՑԱԿՈԲԵԱՆ

(1) Այս առթիւ, Ֆրէզնոյի ՄՇԱԿԸ 7 Նոյ. թիւով Լքուած Հերոսը Խարագուով խմբագրականի մը նուիրած է Զօր. Անդրանիկի շիրմին այս կերպով լքուելուն վրայ եւ յիշեցնելէ վերջ բոլորին պարտքը այդ մեծ մարդուն հանդէպ, կը գերջացնէ « . . . թողուլ որ ամբողջ Հայութեան համար սրբացած անձի մը յիշակը կորսուի Փարիզի օտար եւ մնշուք մէկ անկեան մէջ. թողուլ որ գէթ արձան մը չի կանգնի անոր աճիւններուն վրայ, եւ մէկ քանի ծաղկեպսակներ թարգման չըլլան մէր յարգանքին ու հիացումին, այդ կ'ըլլայ ամենամեծ նախատինքը հերոսներու յիշատակը յարգել չի գիտող ավատաւթեան անարժան սերունդի մը: »

«ԱՅՍ ԱՄԲՈՂՋ ԱՆՄԽԻԹ-ԱՐ ԵՐԵՒՅՑԹԻՆ ՔՈՎ ԵԹԷ ԿԱՅ ՄՐՏԱՊՆԴԻՉ ՄԻԱԿ ԲԱՆՔ, ԱՅՆ ԱԼ Հ. Մ. Բ. Մ.ի ԱՌՆԱԿԸՆ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԿԵՑՈՒԱԾՔՆ է: Անոնք անգամ մին ալ ապացոյցը կուտան թէ իրենք կը պատկանին սերունդի մը որ իր կաշիին վրայ զգալէ վերջ ցեղին դառնութեան ծանրութիւնը, գերագոյն գիտակցութեամբ մը տէր կը կանգնին այն ամէն արժեքներուն, որոնք չափազանց թանկագին են մեզի համար: »

ԱՆԴՐԱՆԻԿՆ ՈՒ ԱՆԴՐԱՆԻԿՆԵՐՈՒ ՀԵՐՈՍՍԿԱՅ ՅԻՇԱՏԱԿԲ ԱՆՄԵՌ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՍԵՐՈՒԵԴԸ Հ. Մ. Բ. Մ.ԻՆ ՍՈՐՎԵԼԻՔ ՇԱՏ ԲԱՆԵՐ ՈՒՆԻ: »

ՄԱՐՄԱԿՐԵԱԼ

ԿԵԱՆՔԸ Հ. Մ. Բ. Մ. Ի ԴԱՇՏԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՏԱՐԵԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ՈԳԵՒՈՐԻՉ ՊԱՏԿԵՐ ՄԸ Հ. Մ. Բ. Մ. Ի ՀԻՆԴ ՏԱՐԲԵՐ
ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻՆ

Ստորեւ կուտանք յուսադրիչ պատկեր մը մեր շրջաններու եւ մասնաճիւղերու մարզական կեանքին: Պատկերը խիստ քաջալերական է եթէ ոչ արդիւնքի՝ գոնէ ոգիի տեսակէտով, թէեւ արդիւնքներն ալ նուազ քաջալերական չեն: Հայ երիտասարդութիւնն է որ կ'եռայ ու կը շարժի, այսօր թիւով քիչ՝ վաղը զանգուածաբար հրապարակ գալու համար: Որքան լրջօրէն դիտենք այս պատկերը նոյնչափ յոյս եւ հաւատք կը ներշնչէ մեզ ապագան եւ օր մը, մօտիկ օր մը, մենք պիտի ողջունենք համաշխարհային Հայ Մարզատօնը ուր պիտի գան տարբեր կլիմաններէ եւ այլազան քաղաքակրթութիւններէ հայ երիտասարդներ՝ կողք կողքի եւ սիրտ սրտի պանծացնելու հայ կամքն ու կորովը:

Այդ փառաւոր օրուան յոյսովը մենք կը քալենք անվիատ:

ԽՄԲԱԴՐՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱ

ՓԱՐԻԶ ԵՒ ՄԱՐԻԱՐՁԱՆՆԵՐ

Կիրակի, 28 Մեզումբեր, Փարիզի Սթատ էլիզապէթի դաշտին վրայ տեղի ունեցաւ Հ. Մ. Բ. Մ. Ի Փարիզի եւ Շրջանի Տարեկան Մարզատօնը:

Նոյն օր օգը բացառապէս գեղեցիկ էր, գարուն էր գրեթէ, խուռն բազմութիւն մը եկած էր զնահատելու հայ բարդուկը եւ հայուն ապրելու կամքն ու ճիզը:

Կը նախազահէր Տիգրան Խան Քէլեկեան, շուրջը ունենալով օրուան թագուհին՝ իր ազնուուհի տիկինը՝ Տիկ. Տ. Քէլեկեան խանը, իսկ պատոյ օրիորդներն էին Օրքերանուհի Օհանեան եւ Եւտոքսի Դարաեան, այս վերջինը անակնկալ պատճառով կը բացակայէր հանդէսէն:

Կը մասնակցէին Հ. Մ. Բ. Մ. Ի մասնաճիւղերը եւ Տիկնանց վարժարանի

սանուհիները, եւ Հ. Մ. Բ. Մ. Ի սկառուներն ու սկառուտուհիները:

Մրցումներէն առաջ տեղի ունեցաւ ֆութպոլի տարեկան ախոյեանութեան ֆինալ մրցում մը Հ. Մ. Բ. Մ. Ի Մարտէլի եւ Իթալիի մասնաճիւղերու միջեւ:

Մրցումները անցան խիստ ոգեւորիչ մթնոլորտի մը մէջ, հանդիսականները մինչեւ վերջ պահեցին իրենց ուշագրութիւնն ու խանդը:

Հանդէսին մաս կը կազմէին Դալրոցասէր Տիկնանց վարժարանի սանուհիներու չափական մարզանքները, ղեկավարութեամբ Պ. Մալումեանի, եւ սկառուներու մարզանքները առաջնորդութեամբ սկառունկ. Մօգաեանի: Ֆրանսական նուազախումբը մէջ ընդմէջ կը նըւազէր հայ եւ ֆրանսական կտորներ:

Հանդէսին սկզբնաւորութեանը եւ վերջաւորութեանը տեղի ունեցան չորս հարիւր սկառուներու, մարզկունիներու եւ մարզիկներու տողանցքը ազգային և

Միութեանս դրօշներու առաջնորդութեամբ, որոնց միջոցին ժողովուրդին ոգեւորութիւնը ծայր աստիճանի հասած էր և անընդհատ կը ծափանարէին: Բոլորը վստահեցան այն օր թէ այս պատանիները ուխտած են պահել իրենց աղդութիւնը եւ հայ ազգը՝ կրնայ յոյս դընել այս աղոց վրայ:

Դաշտին վրայ ներկայ էին, ինչպէս անցեալ տարի—բոլոր հայ կազմակերպութիւններու եւ մամուլի ներկայացուցիչները: Միութեան վարիչները անգամ մըն ալ տեսան եւ համոզուեցան թէ հայ ժողովուրդը այս Միութեան հետ է եւ զործ կ'սպասէ անկէ: Տեղական հայ մամուլը լաճնորէն բացաւ իր էջերը ույն Մարզատօնին առթիւ՝ բարոյապէս զօրավիր ըլլալով Միութեանս:

Հանդէսին վերջաւորութեանը, օրուան նախազահը, թագուհին ու պատոյ օրիորդները բաժնեցին յաղթականներուն շքանշանները:

Մրցումներն եւ տողանցքը լուսանկարուեցան Արաքս եւ Մասիս լուսանկարչատուններու ու շարժանկարուեցաւ Զ. Ե. Ռ. Միութեան կողմէ:

Հանդէսը վերջացաւ ժամանակին, սակայն հանդիսականները կը տատամսէին մեկնելու, այնքան համակրելի էր շրջապատը:

Դիշերը, հացկերոյթ մը տրուեցաւ ճաշարան Գառլոյի մէջ, Պ. Գառլո Շահինեանի կողմէ ուր ներկայ էին Ազգային Սկաուտ-պետը, Վարչութեան անդամները, Մարզատօնի կազմակերպիչները, խմբապետները, խմբապետուհիները, համակիրներ եւ մարդիկներ: Ճաշը անցաւ խիստ մտերմիկ եւ զուարթ, տեղի ունեցան բաժակաճառեր եւ զրւարճախօսութիւններ: Սոյն ճաշասեղանին առթիւ կազմուեցաւ յանձնախումբ մը՝ Հ. Մ. Բ. Մ. Ի. ամրացման նիւթապէս սատարելու համար:

Հանդէսին ամրող տեւողութեանը հակառակ իր տկարութեանը, երիտասարդի մը կորովով կը հսկէր Փարիզի Շրջանային Վարչութեան նախազահ Պ. Ներսէս Օհանեան, որուն տարուան մը

աշխատանքը մէծ չափով կը պսակուէր նոյն օրը:

ԹՈՒԼԿԱՐԻԱ

Յիշիղի

ՏԱՐԵԿԱՆ 507 ՄԱՐԶԱՏՕՆԸ

Պուլկարիոյ Հ. Մ. Բ. Մ. Ի. արդ Մարզատօնը իսկապէս որ Հ. Մ. Բ. Մ. Ի. փառքի ու պատիւի օրը եղաւ: Հ. Մ. Բ. Մ. Ը շնորհիւ իր արժանաւոր նրջ, Վարչութեանը, որ իր կոչումին կատարեալ զիտակցութիւնն ունի, յաջողեցաւ կազմակերպել իր օրդ Մարզատօնը, որ իր տեսակին մէջ առաջնը եղաւ:

Առաջին անգամն էր, որ Պուլկարիոյ բոլոր մասնաճիւղերը, առանց բացառութեան, իրենց մասնակցութիւնը կը բերէին: Ֆացի Ֆիլիպէէն, մասնակցեցան նաեւ Սօֆիա, Շումէն, Ռուսնուկ, Վառնա, Պուրկազ, Ալիվէն, Ստ. Զակօրա, Խասքով եւ թ. Փազարճըք պաշտօնապէս:

Նշանակելի պարագայ մըն ալ այն է, որ Պուլկարիոյ Հ. Մ. Բ. Մ. Ը նոր ութը մրցանիշեր արձանազրեց, որոնք թէեւ կարգ մը պատճառներով լրիւչէին, սակայն պիտի կրնան ուրիշ շրջաններու օրինակ ծառայել:



Մարզատօնը սկսաւ կարգ մը հանդէսիներով: Կէս օրէ առաջ Ս. Գէորգ եկեղեցոյ բակին մէջ տեղի ունեցաւ առաջին հանդէսը, մարզիկներու երդման արարողութիւնով, որուն նախազահ մարզատօնի նախազահ Պ. Տիմիթը ընտիպիէվ (նախազահ Օպլաստի և փոխքաղաքապետ Ֆիլիպէի):

Առառն զեռ կանուխէն, Հ. Մ. Բ. Մ. Ի. ակումբէն ներս թէ զուրս, անսովոր եռուղեռ մը կար. բոլոր շրջանները իրենց մասնաճիւղի դրօշակներովը կազմ ու պատրաստ, զինուորական նուազախումբի ազգանշանին կը սպասէին առաջ շարժելու համար:

Ժամը տասը քառորդ անց, նըւազախումբի առաջնորդութեամբ, Հ. Մ.

Ը. Մ.ի թափօրը ուղղուեցաւ դէպի Ա. Գէորգ Եկեղեցին, ուր սրտատրով կ'ըսպաէր ժողովրդական խուռն բազմութիւն մը:

Թափօրին կը մասնակցէին սկառտներ, սկառտուհիներ, բոլոր դայլիկները եւ մասնաճիւղերը՝ իրենց դրօշակներով: Թափօրին կը հրամայէր Սօֆիայէն յատկապէս հրաւիրուած Պ. Աշոտ Պասմանէան:

Դրօշակի «Պատուի առօէն յետոյ, օրուան նախազահ Պ. Տ. Շտիպլիէվ, գեղեցիկ ճառով մը Մարզատօնը բացուած յայտարարեց և յանուն Պուլկարական Ֆէտէրասիօնի շնորհաւորեց Հ. Մ. Բ. Մ.ը մաղթելով նոր եւ կարեւոր յաջողութիւնները: Օրինակներ տալով յարդելի նախազահ, յիշեցուց պուլկարական նշանաբանը — մարզանքի միջոցով Հայրենիքի համար — եւ թելազրեց որ Հ. Մ. Բ. Մ.ն ալ միշտ նկատի ունենայ այդ սկզբունքը:

Կատարուեցաւ երդման արարողութիւնը: Մարզիկներէն մին կարդաց երդման բանաձեւը, զոր կրկնեցին բոլոր մարզիկները:

Տօքթ. Հայր Ա. Կողեան, բնաբան ունենալով կատարուած երդումը — Աստծոյ, Ազգին, Հայրենիքին հաւատարմօրէն ծառայել — գեղեցիկ եւ յուղիչ ճառով մը մարզիկներուն յիշեցուց նուիրական այդ երդման բովանդակ իմաստը եւ կոչ ըրաւ հայ մարզիկ երիտասարդութեան հաւատարմօրէն ծառայել հայ ազգին ու հայրենիքին՝ ի հարկին չխռնայելով կեանքը նոյնիսկ:

Հայր Սահակի հրանանզիչ ճառը որութնոստ ծափեր խլեց:

Մինչ զինորական նուազախումբ մը մահերգ մը կը հնչեցնէր, Պ. Միսակ Բարսեղեան, յանուն Երջ. Վարչութեան, դադափարի ճամբու վրայ նահատակուած մարզիկներու յիշատակին գեղեցիկ ուղերձ մը կարդաց եւ հրաւիրեց մարզիկները ծունկ չոքել անոնց յայտնի եւ անյայտ գերեզմաններուն առջեւ:

«Հայ մարզիկներ, հայ արինե՛ր, հաւածական բայց անվեհեր ժողովուրդի մը հպարտ զաւակնե՛ր:

«Տարուայ մը տքնաջան աշխատանքէ վերջ, հեռաւոր քաղաքներէ խումբ առ խումբ հաւաքուած այստեղ, տրոփող սիրտերով, երբ Զեր աչքերը յառած էք հոն, խաղաղաշտը, ուր կէս օրէ վերջ ձեր մարզանք-մրցումներովը հրապարակային հաշուետութիւն պիտի ընէք տարուայ մը աշխատանքին, այս հանդիսաւոր պահուն, սրբազն պարտականութիւն մը կը յուղէ մեզ բոլորս:

«Մեր մտածումները կ'երթան հեռաւոր, անծանօթ հորիզոններու տակ վայրագօրէն մահացած մեր մարզիկներուն, որոնք հիմը զրին այս շարժման և, աւաղ, չկրցին տեսնել անոր հասակ նետելը:

«Փլատակներու վրայ նոր շէնքն է որ կը կերտէք, այդ փլատակներուն տակ կը հանգչին ոսկորները յայտնի եւ անյայտ մարզիկներուն: Սուաելապէս մեզի կ'իյնայ յարդել անոնց յիշատակը: Աղօթքի մրմունջքը Զեր շրթունքներուն, ծունկի եկէք, հայ մարզիկները:

«Ուխտ է այս, որ կը կատարենք, քալելու համար անոնց փշոտ ճամբէն: Անոնց՝ որոնք երէկը կերտեցին և այս օրը տուին մեզի: Յարզանք իրենց անմահ յիշատակին:

«Յարզանք անոնց անթաղ, անշիրիմ ոսկորներուն:»

Մէջ ընդ մէջ նուազախումբը նուազեց «Շումի Մարիցան», «Մեր Հայրենիքը», «Յառաջ Նահատակ» եւ «Հայաստան երկիր զրախտավայրը»:


Ապա սկսաւ տողանցքը:

Մասնաճիւղի մարզիկները, խրոխտ, հպարտ եւ համաչափ քայլերով կ'անցնէին ժողովուրդին առջեւէն:

Թափօրը եկեղեցիի բակէն դուրս գալով, նուազախումբի առաջնորդութեամբ, քաղաքին հրապարակէն անցնելով, գլխաւոր փողոցներէն անցաւ եւ ժամը 12ը անց հասաւ Հ. Մ. Բ. Մ.ի ակումբը: Այսպէսով հանդէսին առաջին մասը աւարտեցաւ:

Մրցումները սկսան ժամը Զուկէսին «Բօթէվ»ի մարզադաշտին մէջ:

Հոծ բազմութիւն մը փութացած էր



Փարիզի Տարեկան Մարզատօնին Սկառուտներու, Սկառուտուիիներու, Դպրոցասէրի
սանուիիներու եւ մարզիկներու տողանցքը:

Հ. Մ. Բ. Մ.ի մէկ տարուան թափած
տքնաջան աշխատանքին արդիւնքները
ըմբռչխնելու համար: Եւ պէտք է խոս-
տովանիլ, որ ժողովուրդը յուսախաք չե-
ղաւ իր ակնկալութեանը մէջ: Որովհետեւ
Հ. Մ. Բ. Մ.ի մարզիկները այս տարի
ութը չափանիշներ կոտրեցին ու Պուլկա-
րահայութեան մարզական պատիւը ան-
դամ մը եւս բարձրացուցին:

Պատույ տեղերը զրաւած էին նախա-
զան Պ. Տիմիթը Շտիպլիէվ, իրեն հետ
ունենալով մէկ կողմէն օրուայ թագուհի
Տիկ. Թագուհի թօփաքաշեան, իսկ
միւս կողմը պատույ օրիորդներ Ռամե-
լա Թէրզեան և Անի Մեստուչեանը: Ֆի-
լիպէի կարնիզոնին կողմէ ներկայ էր
քարիթան մը, իսկ անոնց կողքին
Միթթարեան վարժարանի Յ վարդա-
պետներ եւ ֆրանսական զօլէճի երեք
չայրերը:

Իսկ Մարզադաշտին մէջ, զըրկա-
խառնուած էին երկու խոշոր եռազոյն-


ներ, Պուլկարականը եւ Հայկականը:

Ժամը երկուքուկէսին Զինուորական
նուազախումբը կը հնչէր եւ մրցումները
կը սկսէին:

Մրցումները տեսեցին մինչեւ ուշ
գիշեր և մրցանակաբաշխութիւնը տեղի
ունեցաւ լուսնկայի վկայութեամբը:

Որպէս չորս առաջնութիւն ստացած
մէկը, Վառնայի շրջանէն Պ. Յովսեփ Ե-
րամեան օրուայ ախոյեան յայտարարւե-
լով Շրջ. Վարչութեան բաժակին տիրա-
ցաւ:

Բոլոր մարզիկները անխառն ու եղ-
բայրական անկեղծութեամբ օրուայ ա-
խոյեանը օդին մէջ բարձրացնելով կե-
նացը մաղթանքներ ըրին եւ պատույ
օրիորդներ երկրորդ եւ երրորդներուն
շքանշանները բաժնեցին:



ԱԹԵՆՔ.—(Տարեկան Մարզատօնէն) Վերը՝ Ֆիքսի մարզիկները
Տակը՝ Մարզիկներու երդումը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԵՆՔ ԵԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԵՐ

Հ. Մ. Բ. Մ. ի կազմակերպած մարզական ներքին մրցումները օգստ. 21 կիրակի օր տեղի ունեցան Աթենքի Բանէլինիոն դաշտին մէջ: Հակառակ կանուխէն տեղացած անձրեւին եւ օդին ամպուտած ըլլալուն համակիրներու ըստւար բազմութեամբ մը լեցուած էր մարզադաշտը սպասելով օրուան մրցումներու բացումին:

Ամէն կողմ եռուզեռ, ամէն կողմ շարժում: Սկառուտները կը պահպանէին կարգը:

Ազգ. Կեդր. Վարչութիւնը կը հովանաւորէր սոյն հանդէսը եւ իր կողմէ ներկայացուցիչ կարգած էր Պ. Պ. Կէլիպուեանը եւ Էմիրեանը:

Նախագահ Պ. Առաքել Պետրոսեան եւ օրուան թաղուհի Տիկ. Արաքսի Մ. Յարէթեան շրջապատուած պատուոյ

օրիորդներ Ա. Պետրոսեան, Բ. Պալթական, Հովհարտեան եւ Կ. Պալեօդէ զբանած էին պատուոյ տեղը:

Պատուիրակութիւններ ղրկած էին Յունահայ Լիկան, հայրենակցական եւ այլ զանազան Միութիւններ, օտար եւ հայ մամլոյ ներկայացուցիչներ, և յոյն մարզական միութիւններ:

Ժամը երկուքին բոլոր մարզիկները քննուեցան Միութեանս պատուոյ բժիշկ Տօքթ, Յ. Աշքեանի կողմէ:

Ժամը երեքուկէսին սկսաւ տողանցքը: Երկու սկառուտներ առաջէն կը տանէին չելլէն եւ չայ զրօշները. ետեւէն չորս մասնաճիւղերու ղրօշները. յետոյ Գոգինիոյ եւ Ֆիքսի սկառուտները առաջնորդութեամբ վարիչներ՝ Պ. Պ. Թօմպուլեանի եւ Սափրիչեանի, եւ ամէնէն վերջ մարզիկները մասնաճիւղ մասնաճիւղ, մօտ քառասուն հոգի, կայտառ եւ կորովի, որոնք կ'առաջնորդուէին Աւագխամբապետ Պ. Հայկ Տէտէեանի ղեկավարութեան տակ:

Մարզիկները եւ սկառուտները խանդավառ ծափեկու մէջ կանգ առին օրւան նախագահին հանդիպակաց կողմը, դիմաւորուելով Շբջ. Կեդր. Վարչութեան կողմէ: Օրուան քոմիսէր Պ. Սարգիսեան յանուն Վարչութեան շնորհակալութիւն յայտնեց մարզիկներուն այս ուրախ օրուան համար եւ թելագրեց բարձր ողիով մօտենալ խաղերուն եւ արձանագրել պատուաբեր յաջողութիւններ:

Տրուած փողի նշանին վրայ հասարակութիւնը յոտնկայս ընդունեց երդման յուղիչ արարողութիւնը, որը կատարեց Ֆիքսի մարզական խմբապետ Համօ Մէհրապեան:

Նախագահ Պ. Պետրոսեան գեղեցիկ ճառով մը վերլուծումն ըրաւ չորս գեղեցիկ տառերու (Հ. Մ. Բ. Մ.) արժէքին մասին, ճշգեց անոր բարձր դերը հայ երիտասարդութեան մէջ, որոնք մեծ մասամբ խլուած արհաւիրքի ծոցէն, կըրցան իրենց մխիթարութիւնը գտնել այս մեծ ընտանիքին ծոցը: Հ. Մ. Բ. Մ.ը վրանմ խորան մըն է, որուն պէտք է իր գոհողութիւնը ընթէ ամէն հայ առանց բացառութեան: Եյս տեսակ քաղաքակիրթ հորիզոններու մէջ Հ. Մ. Բ. Մ.ը կ'արժեցնէ իր զոյութիւնը, բարձր բռնելով ազգիս պատիւը: Երբ ամէն ազգ, խորապէս կ'զրադի մարմնակրթանքով և սկառտիզմով, մենք ալ անմասն չենք մնար այս տեսակ ձեռնարկներու մէջ, պայմանաւ որ ժողովուրդը միշտ քաջալիք հանդիսանայ ամէն կերպ այս ձեռնարկին:

Յետոյ շնորհաւորելով Կեդր. Վարչութիւնը իր այս գնահատելի աշխատանքին համար, շնորհակալութիւն յայտնեց ժողովուրդին ու հանդէսը բացւած հոչակեց:

Օրուան դատաւորներն էին Պ. Պ. Մ. Յարէթեան, Է. Սարաֆեան, Հ. Տէտէեան, Յ. Կիւրինեան, Գ. Հովարտեան ինչպէս նաև մարզական լիազօր Պ. Կ. Շահինեան:

Մրցումներու աւարառումէն ետք տեղի ունեցաւ մետալներու բաշխումը:

Նախագահ Պ. Պետրոսեան 36 մետալներ տրամադրած էր Ա. Բ. Գ. ելլողներու: Իսկ օրուան թագուհի Տիկին Յարէթեան գեղեցիկ բաժակ մը օրուան ախոյեանին:

Օրուան ախոյեան հոչակուեցաւ Ֆալէրոյի խումբէն Վահան Պօղիկեան:

Նկատելով որ Համօ Մէհրապեան երկու մրցանից կոտրած է Կեդր. Վարչութիւնը իր կողմէն առանձին բաժակ մը տրամադրեց յիշեալին:

Մասնաձիւզներու մէջ առաջնութիւն շահեցաւ Ֆիքս. 65 կէտ, Բ. Ֆալէրո 40 կէտ, Գ. Գօղինիա 22 կէտ, Դ. Լիրազմա 12 կէտ:

Բոլոր մարզիկները ստացան թէ Վարչութեան եւ թէ ժողովուրդին շնորաւորութիւնները եւ ցնծալից ծափահարութիւնները:

Կեդրոնական Վարչութեան կողմէ Պ. Արմենակ Տէր Յակոբեան հրապարակաւ իր շնորհակալութիւնները յայտնեց մարզական վարիչ Պ. Կ. Շահինեանի, որ ի զլուխ հանեց ներքին ողիմալիքականը, զայն հոչակեց Հ. Մ. Բ. Մ.ի Յունաստանի շրջանի պատուոյ անդամ, եւ անոր ներկայացուց գեղարուեստականօրէն պատրաստուած վկայական մը:

Առ որոշումը խանդավառ ծափերով ողջունուեցաւ եւ ներկաները շնորհաւորելով թէ Կեդր. Վարչութիւնը եւ թէ այս ձեռնարկին համար աշխատողները, բաժնուեցան գեղեցիկ օրուան մը հաճոյքով:

ՍԵԼԱՆԻԿ

Ամսոյս 5ին, Կիրակի ժամը 3ուկէսին տեղւոյս Ե. Բ. Բնկերակցութեան դաշտին վրայ տեղի ունեցաւ Սելանիկի Հ. Մ. Բ. Մ.ի առաջին տարեկան մարզատօնը:

Հինդ հարիւրէ աւելի բազմութիւն մը ներկայ էր մրցումներուն, որոնք բռնըն հետաքրքրութեան մէջ անցան:

Օրուան թագուհին էր Տիկին Մարօգարծանքեան, իսկ պատոյ օրիորդներ՝ Մէնծիկեան եւ Ռուբինեան: Պ. Կ. Ղազարեան հովանաւորող եւ նախագահ Պ. Պարծանքեան:

Հրատիրուած էին փոխ քաղաքապետ Պ. Քօզմօփուլոս, թագիկի նախագահը եւ «Յառաջ»ի խմբագիր Պ. Շաւարչ Միսաքեան:

Առաջին անգամ տեղի ունեցաւ մարդկաներուն տողանցքը կայտառ երիտասարդ պատանիներով, որոնք պատույ բեմին առջեւ իրենց երգումները կատարելէ վերջ սկսան մրցումները:

Մրցումներու աւարտումէն վերջ Պ. Շաւարչ Միսաքեան հրատիրուեցաւ երկու խօսք ընելու, որ շատ ազգու եւ գեղեցիկ խօսքերով ի մէջ այլոց ըստ.— «Մէնք ըսլորս զաւակներն ենք այն ցեղին, որ աշխարհի մէջ ամէնէն աւելի շատ պէտք ունի մարզական կեանքին կարեւորութիւն տալու, մեր նպատակն է Եւրոպայի մէջ եւ ամէն տեղ սերունդը փրկել պահելով անոր ֆիզիքական առողջութիւնը մարզական կեանքով։ Բայց ամէնէն աւելի կարեւորը մարզական շարքին մէջ սկառտական շարժումն է, ամէնէն աւելի այս շարժման պէտք է կարեւորութիւն տալ, ան է որ կը շինէ մեր նկարագիրը, և կը բարձրացնէ կեանքին մէջ իրրեւ մարդ։»

Յետոյ մաղթեց որ մինչեւ դալ տարի Սելանիկ ունենայ իր սկառտ կազմակերպութիւնը և մարզիկներուն քանի մը քաջալերական խօսքերով իր գոհունակութիւնը յայտնեց Հ. Մ. Բ. Մ.ի կատարած աշխատանքին։

Տեղի ունեցաւ մրցանակներու եւ մետալներու բաշխումը Տիկին Մ. Պարձանքեանի կողմէ։

ԹՌԺՄԱԿԻՑ

ԵԳԻԹԾՈՒ

ԳԱԶԻՐԵՀԷԼԻՌՈՒԼԻՄ

Հ. Մ. Բ. Մ.ի Գ. տարեկան մարզահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 28 Սեպտեմբերին, կազմակերպութեամբ նոյն Միութեան Գահիրէի եւ Հելիոպոլսի մասնաճիւղերուն, մասնակցութեամբ 22 մարզիկներու եւ նախագահութեանը տակ նուպարեան Ազգ. մարժարանի

յարգելի տնօրէն Պ. Գար. Տիւրկէրեանի Փամը 5,50ին Հ. Մ. Բ. Մ.ի Հելիորոլիսի մասնաճիւղին սեփական մարզադաշտը լեցուած էր խուռն բազմութեամբ մը, որու մէջ նշամակելի թիւ մը կը կազմէին երիտասարդները։ Մարզահանդէսին բացումը կատարուեցաւ տողանցքով մը, ուր ուշադրաւ կարգապահութեամբ ու կոկիկ քալուածքով մարզիկները կը խոստանային զոհ ձգել մեղ։


Ամէն տարի Հ. Մ. Բ. Մ.ի վարիչները գեղեցիկ զաղափարը կ'ունենային փոքրերն ալ ուրախացնելու՝ մնձերուն հետ զանոնք ալ խառնելով մրցմանց մէջ եւ առանձին մրցանակներով վարձատրելու անոնց ալ ճիզր։ Այս տարի պայմաններու բերմամբ զանց առնուածէին վորոյ մարդիկը բացակայէին զժբաղդաբար:

Վերոյիշեալ մրցումներուն դատական մարմինը կազմուած էր Պ. Պ. Տօքթ. Արոյեանէ, Գալֆական Հրաչեայէ, Ճիզմէճեան Հայկէ, Մարզարեան Յարութիւնէ, Մերձանեան Տիգրանէ, Շահինեան Արմենակէ, Շահրիման Վահէէ, Սէտէփճեան Սիմոնէ եւ Քրիսեան Արարատէ, որոնցմէ մի քանին կը բացակայէին զժբաղդաբար:

Մրցումներու աւարտումէն վերջ նախագահը երկու խօսքով կատարեց մըրցանակարաշխութիւնները։ Ան ըաղձանք յայտնեց հայ երիտասարդութեան մարզանքի եւ այլ գեղեցիկ բաներու նուիրումին արդիւնք տեսնելը հայ ազգին կազմուրումը ներքնապէս եւ խաղաղութիւնը։

Յետոյ խօսք առաւ Պ. Հայկ Ճիզմէճեան եւ Միութեան կողմէ իր շնորհակալութիւնները նախագահին եւ շնորհաւորութիւնները՝ մարզիկներուն յայտնելէ վերջ այս գեղեցիկ մարզահանդէսը վերջ զտաւ ներկաներուն հրճուալից երջանիկ իրարանցումին մէջ, ինչ որ Հ. Մ. Բ. Մ.ի երկու մասնաճիւղերուն ալ միակ եւ զոհացուցիչ վարձատրութիւնն է։

Լաւ է որ հայ երիտասարդութիւնը այսպէս յաճախ խանդագառուի։ Յաճախըսի, որովհետեւ տարին անգամ մը շատ



ՓԱՐԻԶԻ ՄԱՐՁԱՏՈՆԵՆ

0. ԶԵՔԵԱՆ 100 սԵԹՐՎԱԳ ՔԻ ԱԼԱՐՄԵԼՈՒ:

ՔԵՀ Է: Եւ յետոյ ինչու միայն Հ. Մ. Հ.
Մ. Ը ԸԼԼԱՅ ողիմպիականներ կազմակեր-
պողը: Ո՞ւր են միւս կազմակերպութիւն-
ները: Մանաւանդ նոյն Հ. Մ. Հ. Մ. ի Ա-
ղեքսանդրիոյ մասնաճիւղը, որուն համար
իրաւամբ կը գժգոհէր Հ. Մ. Հ. Մ. ի հա-
մակիր մը, ըսելով թէ «ան ցվերջ իր
տանը մէջ մնալու դատապարտուած է
կարծես»: Կը պահանջենք Աղեքսանդր-
իոյ Մասնաճիւղէն, որ ցոյց տայ թէ չի
քնանար, յաջորդ անգամ Գահիրէի և Հե-
լիորոլիսի մասնաճիւղերն Աղեքսանդրիա
հրաւիրելով:

b. Մ.

ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔԸ

100 ՄԵԹՐ ՎԱԶՐ

ՓԱՐԻԶ 44¹/₅ Ի. Վ. 0. ԶԵՔԵԱՆ, ՔՈՒՂՈՒ-
ԼԵԱՆ, ՊՕՂՈՍԻԼ, (ՄԱՐ-
ԱՒԼ):

Ասատուրեան բարձրութիւն ցատկելու մէջ:

ՖԻԼԻՊԵ	41 ² / ₅	»	Յ. Երամեան, Գ. ՄԵԼՔՈՆԵԱՆ, Թ. ՏՈՔ- ԹՈՐԵԱՆ:
ԱԹԵՆՔ	42 ¹ / ₅	»	Հ. ՍՈՂԱՔԵԱՆ, Վ. ՊՈ- ՂԻԿԵԱՆ, Պ. ԳՐԱ- ՐՈՂԵԱՆ:
ՍԵԼԱՆԻԿ	42 ⁴ / ₁₀	»	Հ. ՊԱՐՈՆԵԱՆ, Պ. ՓԵՂՄԻՄԱԼՃԵԱՆ:
ԵԳԻՊՏՈՍ	42 ⁹ / ₁₀	»	Գ. ՀԻՍԱՐԼԵԱՆ, Մ. ԱՐԳԱՐԵԱՆ, Ս. ՏԵՐ- ՆՔՐԱԽԵԱՆ:
ՀԱՅԼ. ՄՐԳԱՆԻՉ	41 ² / ₅	Հ. ԱՖԵՄԵԱՆ	

ՍԿԱԽԱՌԱԿ ՆԵՏԵԼ

ՓԱՐԻԶ	27,40	մ.	Ա. ՈՍԿԵՐԻՑԵԱՆ Ա. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Ս. ՎԵ- ԼԵՄԵԱՆ:
ՖԻԼԻՊԵ	28	»	Յ. Երամեան, Թ. ՄԵԼՔՈՆԵԱՆ, Մ. ՄՈՒ-
ԱԹԵՆՔ	22,96	»	Ա. ՍԱՅԵԱՆ, Հ. ՍԱՐ- ԳԻԿԵԱՆ, Ա. ՔԵԼԵՀ-
			ԵԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ 9,85 մ. Պ. Պէնլեան, Խ. Մանաշեան:

) 9,75 մ. Փոքրերու Ե. Գույումճեան, Մ. Թուրշումճեան, Գ. Հաճեան:

ԵԳԻՊՏՈՍ 9,50 մ. Պ. Գուրեան, Ա. Աբգարեան, Ա. Արոյեան:

Հայկական մըցանիշ 13,15մ. Ժ. Խթիկեան

200 ՄԵԹՐ ՎԱԶԲ

ՓԱՐԻԶ 25³/₅ ե.վ. Գ. Ալիքսանեան, Ժ. Գուղուեան, Պօղոսիկ:

ՖԻԼԻՊԵ 25 » Գ. Մելքոնեան, Ժ. Տոքթորեան, Պ. Գարբուժեան:

ԱԹԵՆՔ 25³/₅ » Պ. Պօղիկեան, Հ. Սոլաքեան, Կ. Մարեան:

ՍԵԼԱՆԻԿ 26⁴/₁₀ » Պ. Փէշտիմալճեան, Յ. Տէյիրմէնճեան, Ա. Գավուզճեան:

) 27 » Փոքրերու Յ. Թախտալեան, Կ. Տողրամաճեան, Ա. Համբարձումեան:

ԵԳԻՊՏՈՍ 27 » Գ. Հիսարլեան, Մ. Աբգարեան, Օ. Գարբուժեան:

Հայկ. մըցանիշ 24 ե.վ. Յ. Մամիկոնեան

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՑԱՏԿԵԼ

ՓԱՐԻԶ 4 մ. 55 Ասատորեան, Հապէշեան, Սանտրուեան:

ՖԻԼԻՊԵ 4 մ. 69 Յ. Երամեան, Ժ. Տօքթորեան, Հ. Մրապեան:

ԱԹԵՆՔ 4 մ. 55 Հ. Մեհրապեան, Ն. Սայեան, Հ. Էմիրեան:

ՍԵԼԱՆԻԿ 4 մ. 45 Օ. Միսկճեան, Ա. Առաքելեան, Ա. Գավուզճեան:

) 4 մ. 38 Փոքրերու Ա. Պարոնեան, Մ. Թուրշումճեան:

ԵԳԻՊՏՈՍ 4 մ. 56¹/₂ Յ. Իփրանսուեան, Ճ. Գալէմքեարեան, Ա. Աբգարեան:

Հայկ. մըցանիշ 1,70 Բ. Կէօգիպէօյիւքեան

3000 ՄԵԹՐ ՎԱԶԲ

ՓԱՐԻԶ 10վ. 42ե.վ. Վ. Քէչէճեան, Քլրաճեան, Դաւիթեան:

ՖԻԼԻՊԵ 12վ. 54ե.վ. Վ. Չամուրճեան, Ա. Թէրդեան, Լ. Ասատուրեան:

ԱԹԵՆՔ
ՍԵԼԱՆԻԿ
ԵԳԻՊՏՈՍ

ՉՈՒՆԻՆ:

Հայկ. մըցանիշ 10վ. 2²/₅ե.վ. Յ. Մամիկոնեան

ՆԻԶԱԿ ՆԵՏԵԼ

ՓԱՐԻԶ 55 մ. 82 Հ. Մալխասեան, Ա. Վէլէտեան, Ա. Ռոկերիչեան:

ՖԻԼԻՊԵ 59 մ. 28 Ժ. Մելքոնեան, Մ. Մովսէսեան, Գ. Մելքոնեան:

ԱԹԵՆՔ 55 մ. 60 Ն. Սայեան, Կ. Մըրսեան, Հ. Մարգիսեան:

ՍԵԼԱՆԻԿ 58 մ. 50 Ա. Գավուզճեան, Ա. Առաքելեան, Հ. Էթեէմէղեան:

ԵԳԻՊՏՈՍ 55 մ. 22 Վ. Գալէմքեարեան, Պ. Գուրեան, Ե. Երգնկացեան:

Հայկ. մըցանիշ 50,03 Յ. Թաշճեան

400 ՄԵԹՐ ՎԱԶԲ

ՓԱՐԻԶ 65 ե.վ. Պօյաճեան, Յակոբեան, Լուէնեան:

ՖԻԼԻՊԵ 58⁹/₁₀ » Հ. Մրապեան, Ժ. Տօքթորեան, Պ. Գարբուժեան:

ԱԹԵՆՔ 65 » Վ. Պօղիկեան, Ն. Քէշիշեան, Յ. Գալրզլեան:

ՍԵԼԱՆԻԿ 59³/₅ » Հ. Պարոնեան, Օ. Զամպաքճեան, Ժ. Գույումճեան:

ԵԳԻՊՏՈՍ 69 » Ա. Մինասեան, Մ. Աբգարեան, Շ. Պաթմանեան:

Հայկ. մըցանիշ 54²/₅ Յ. Մամիկոնեան

ՄԵԹԻ ՎԱԶՔ

ՓԱՐԻԶ 5 գ. 2⁴/₅ ե. գ. Ա. ԲԵՀԵՃԵԿԱՆ, ՍԵՐՈՊԵԿԱՆ, ՎԱՐԴԱԿԱԿԱՆ:

ՖԻԼԻՊԻ 5 գ. 2¹/₂ ե. գ. Ա. ՎԱՐԴԱԿԱԿԱՆ, Հ. ՍԵՐԱԳԵԿԱՆ, Գ. ՉԱՄՈՒՋԵԿԱՆ:

ԱԹԵՆՔ 5 գ. 30 ե. գ. Խ. ՈՒՆՃԵԿԱՆ, Գ. ԳԱՅԵԿԱՆ, Ն. ՆԻԿՈՂՈՍԵԿԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ 5 գ. 7 ե. գ. Կ. ՄԱՐՈՒթԵԿԱՆ, Ժ. ԳՈՎԵՈՒՄՃԵԿԱՆ:

ԵԳԻՊՏՈՍ 5 գ. 2⁵/₁₀ Ա. ՄԻՆԱՍԵԿԱՆ, Օ. ՉԱՔՐԵԿԱՆ, Հ. ՊԵՄ-ՐՈՍԵԿԱՆ:

Հայկ. մրցանիշ 4 վ. 35 ե. գ. Կ. ԹԱՂՑԵԿԱՆ

ՄԵԿ ՔԱՅԼ

ՓԱՐԻԶ ՉՈՒՆԻ:

ՖԻԼԻՊԻ 6 մ. 72 Յ. ԵՐԱՄԵԿԱՆ, (ԿՈՄ-
ՊԱՁ ՆԱԽԱԼԻՆ ՊՈՎԵ-
ԼԿԱՐԱԼԿԱՆԸ և ՀԱՅ-
ԿԱԿԱՆԸ)

ԱԹԵՆՔ 5 մ. 56 Բ. ՄԱՄՃԵԿԱՆ, Հ.
ԷՄԻՐԵԿԱՆ, Ո. ԹԵՔՐԵ-
ԿԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ 5 մ. 50 Հ. ՊԱՐՈՆՆԵԿԱՆ, Յ.
ՏԵՂԻՐՄԵԽՆՃԵԿԱՆ, Հ. ԷՄ-
ԷՄԵՔԵԿԱՆ:

» 4 մ. 80 ՓՈՔՐԵՐՈՒ

Յ. ԳԱՎՈՒՔՃԵԿԱՆ, Ա.
ՊԱՐՈՆՆԵԿԱՆ, Թ. ԳԱ-
ՎՈՒՔՃԵԿԱՆ:

ԵԳԻՊՏՈՍ 4 մ. 87 Ա. ՄԻՆԱՍԵԿԱՆ, Ա.
ՏԵՐ ՆԵՐՍԵԿԱՆ, Գ.
ՀԻՍԱՐԼԵԿԱՆ:

Հայկ. մրցանիշ

ԵՐԵՒ ՔԱՅԼ

ՓԱՐԻԶ ՉՈՒՆԻ

ՖԻԼԻՊԻ ՉՈՒՆԻ:

ԱԹԵՆՔ 12 մ. 54 Հ. ՄԵՀՐԱՎԵԿԱՆ, Ո.
ԹԵՔՐԵԿԱՆ, Հ. ԷՄԻՐ-
ԵԿԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ 11 մ. 42 Օ. ԶԱՄԱՎՔՃԵԿԱՆ, Հ.
ԷՄԷԿԵՄԵՔԵԿԱՆ:

ԵԳԻՊՏՈՍ 9 մ. 89

Մ. ԱՐԳԱՐԵԿԱՆ, Ս.
ՏԵՐ ՆԵՐՍԵԿԱՆ, Գ.
ՀԻՍԱՐԼԵԿԱՆ:

Հայկ. մրցանիշ

ՉՈՂՈՎ ԲԱՐՁՐՈՒԹԻՒԽԻՆ

ՓԱՐԻԶ ՉՈՒՆԻ:

ՖԻԼԻՊԻ 2 մ. 80 Տ. ՊԱՐՏԻԳԱՎԱԿԱՆ
Հ. ՍԵՐԱԳԵԿԱՆ, Գ. ՉԱ-
ԼՈՍՈՒԵԿԱՆ:

ԱԹԵՆՔ 2 մ. 40 Հ. ՄԱՐԳԻՍԵԿԱՆ, Ն.
ՔԵՂԲՀԵԿԱՆ, Ա. ԳՈՅԱ-
ԿԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ { ՉՈՒՆԻ:

ԵԳԻՊՏՈՍ { ՉՈՒՆԻ:

Հայկ. մրցանիշ

4×100 ԴՐՈՇԱՐՇԱՀ

ՓԱՐԻԶ 5 1⁴/₅ Եղ. ՌՈՆԻ Առ ՊՈւա,
ՊՈւա ԳՈԼՈՒԹ, ՄԱՐ-
ԱՀԼ ՄԱՍՆԱՖԻՂԵՐ:

ՖԻԼԻՊԻ 5 5⁸/₁₀ » ՖԻԼԻՊԵ, ՊՈՎՐԿԱԳ,
ՄԻՒՎԵՆ մ. ՖԻՂԵՐԸ:

ԱԹԵՆՔ 5 5²/₅ » ՖԱԼԵՐԸ, ԼԻՔԱԳՄԱ,
ՖԻՔՍ մ. ՖԻՂԵՐԸ:

ՍԵԼԱՆԻԿ ՉՈՒՆԻ:

ԵԳԻՊՏՈՍ ՀԵՂԻՌԵՌՈՒ ԽՂՋԿԱ:

ՓՈՔՐԵՐՈՒ ԲԱԺԻՆ

ՓԱՐԻԶ 300 ՄԵԹԻ, ՄօզաԿԱՆ, ԳԱԼԻՎԱԳ-
ՃԵԿԱՆ, Դ. ՃԻԳՄԵՃԵԿԱՆ:

ԱԹԵՆՔ 60 » ՄԱՆՈՒԿ ՄԱՏԱՋՈԼ-
ԵԿԱՆ, ՎԱՀԱՊՆ ՓԱ-
ԳԻԱԳԵԿԱՆ, ԿՐԱԼ. ՊԱՐ-
ԱԱՄԵԿԱՆ:

» ՊՈՐԿԱՐՇԱՀ ՀԱՅԿԱԳՆ ՄԱՏԱՆ-
ԵԿԱՆ, ՄԿՐՄ. ԽԱՀԱ-
ՄՈՒՐԵԿԱՆ, ՅԱԿՈԲ ՔԵ-
ՇԻՉԵԿԱՆ:

ՍԵԼԱՆԻԿ 80 ՄԵԹԻ,
10³/₁₀ Եղ. Յ. ԹԱԽՏԱՃԵԿԱՆ, Ա.

ՃԱՄՃԵԿԱՆ, Ե. ԳԱ-
ՎՈՒՄՃԵԿԱՆ:



Սարսէլի եւ ֆորթ տ' իթալիի խումբերը որ ֆարիզի Տարեկան Մարզատօնին
կատարեցին բաժակի մրցումը

ՖՈՒԹՊՈԼ (Մարզահանդէսէն)

ՓԱՐԻԶ

Մարզահանդէսին սկզբնաւորութեանը տեղի ունեցաւ. Փարիզի Հ. Մ. Ռ. Մ. ի խումբերու ախոյեանութեան վերջնամքումը (finale), Փորթ Տ'իթալիի եւ Սարսէլի մասնաճիւղերու միջև։ Անցած տարի իթալին էր որ շահած էր բաժակը իսկ այս անգամ Սարսէլի ինկաւ յաղթականի պատիւը 50վ 2 կոր. Մրցումը շատ հետաքրքրական էր, երկու խումբերն ալ ապագայ խոստացող խաղացողներէ կազմուած ըլլալով։

Առ առթիւ Շրջանային վարչութեան տրամադրած դեղեցիկ բաժակը ստացաւ Սարսէլի մասնաճիւղը՝ օրուան նախազահին ձեռքէն։

ՖԻԼԻՊԵ

Մարզատօնին օրը, Սօթիվէ դաշտին մէջ տեղի ունեցաւ բաժակի մրցում մը Սլիվէն Պուրկազ մասնաճիւղերու միջև։ մրցումը վերջացաւ ի նպաստ Սլիվէնի 4-0ով։

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

ՓԱՐԻԶ

Մրցումներէն վերջ, օրուան նախազահ Քէլէկեան իւան անձամբ բաժնեց մրցանակները եւ այս առթիւ 500 ֆրնք. նուիրեց Յանձնախումբին՝ շաքարեղէն դնելու համար փոքր սկառտներուն։

Գառլո Շահինեան ժամացոյց մը նըւիրեց օրուան ախոյեան Պ. Վարդէս Քէչէճեանի։

ՖԻԼԻՊԵ

Պուլկարիոյ Շրջ. 5րդ. Տարեկան Մարզատօնին լրացուցիչ ընդհանուրարդիւնքներն են,

Վառնա 23, Ֆիլիպէ 57, Սօֆիա 5, Պուրկազ 8, Սլիվէն 21, եւ Թաթար-Փագարճը 5 կէտ։

Օրուան ախոյեան հոչակուեցաւ Պ. Յովսեփ Երամեան, որ հրաւիրուած է մասնակցելու Պուլկար Ֆէտէրասիոնի կողմէ Միջպալքանեան մրցումներուն։

Նոյն գիշեր Ֆիլիպէի մէջ տեղի ունեցաւ Մայչինա Կրիժայի սրահին մէջ հանդէս մը ուր խուռն բազմութիւն մը ներկայ էր։ Տեղիունեցան սկառտական եւ գայլիկներու խաղեր, հայկական պարեր ու երգեր։

Պուլկարիոյ Շրջանային Վարչութեան կողմէ խօսեցաւ Պ. Ներսէս Աստուածատուրեան կոչ ընելով ժողովուրդին որ հոգ տանին ապագայ սերունդի գաստիակութեան, այլապէս օրուան սիրունդը անցնելէ յետոյ ապագայ հայութիւնը կը մնայ անտէր և տարւած աշխատանքը ապարդիւն կ'անցնի։

Հ. Սահակ Կողեան բեմ գալով կարծ բանախօսութիւն մը ըրաւեւ թելադրեց Հ. Մ. Ռ. Մ. անդամներուն երեք նշանաբաններ, յարատեւութիւն, օրինապահութիւն եւ արդարասիրութիւն։ Բառ «ժողովուրդ մը որ կը հետապնէ իր Երազին իրականացումը, նկատի պիտի առնէ այս երեք զլխաւոր կետերը։

Հարդէսը վերջացաւ կէս գիշերին։



Փարիզի Տարեկան Մարզատօնի Պատուոյ բեմը. մէջտեղը Տէր եւ Տիկ. Քէլէկեան խան Չրչապատուած Պատուոյ Օրիորդներով

ԱԵԼԱՆԻԿ

**Մէծերէն օրուան ախոյեաններ Հրանդ
Պարոնեան եւ Պատրիկ Պէնլեան ստա-
ցան մէյմէկ բաժակներ, եւ զանազան
մետալներ: Առողջ ունէին 15 ական կէտ:**

**Փոքրիկներէն ախոյեան հանդիսա-
ցաւ թահթաճեան (15 կէտ), ստացաւ ա-
խոյեանական մեծ մետալ մը եւ ուրիշ-
ներ:**

ՃՆՈՐՀԱԿԱՌԻՐ

Փարիզի Նրգանային Վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ օրուան նախագահ Վանմ. Տէր եւ Տիկին Տիգրան Խան Քէլէկեանի, պատուոյ օրիորդներուն, դաշտի գատաւորներուն եւ կազմակերպիչներուն, Պ. Շ. Վեմելենին որ ամէն տարի կ'աջակցի մեղի, ինչպէս տեղիս իայ մամուլին՝ «Յառաջ»ի, «Ապագայ»ի, «Կավուշ»ի, «Տեղեկատու»ի եւ Պոլսոյ «Նոր Լուր»ի ու Եգիպտոսի «Արեւ» թերթի թղթակիցներուն, որոնք բարոյապէս սիրայօժար աջակցեցան մեր մարզատօնին իրենց քաջալերական տողերով ու ծանուցումներով:

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ(1)

Հինգ տարի շարունակ Հ. Մ. Բ. Մ. Պուլկարիոյ Շրջանային Վարչութիւնը, զոհողութիւններու եւ սպառող աշխատանքի շնորհիւ կը կազմակերպէ ցեղային կենսունակութեան արտայայտութեան այս շանդիսութիւնները, իայ նորահաս սերունդի մարմնակրթական մարզին մեջ կատարած նուանումներու որակումը եւ նորանոր յառաջդիմութեանց հնոցը:

Փառքի եւ պսակի օր, մեծ դասերու եւ ոնք վճռականութեանց ու կորովի աղբիւր:

Տղայական խաղեր չեն որ կը կատարուին, մեր հեթանոսական անցեալին գեղեցիկ՝ առողջ ուժի եւ չարքաշութեան

(1) Այս գեղեցիկ կոչք հրատարակած է Պուլկարիոյ Նրգանային Վարչութիւնը 5րդ Տարեկան Մարզատօնին առթիւ: Հռուց կերպով կ'երեւայ Հ. Մ. Բ. Մ. Պուլկարի մարմնակրթութեան և անոր բարոյական արժեքի մասին:

աւանդութիւններն են որ հաւատարմօքն կը շարունակուին:

ցեղին ոյժը, առոյգ կազմուածքը, արփութիւնը ու տոկունութիւնը կը վերաբարձուի:

շալաճական ու պարտուած ժողովուրդի մը զաւակները կրակոտ աչքերով արեւին կը նային, վահագնի երգը կ'երգեն ու շայոց Աշխարհի առասպեսական հերոսներու անցեալը կ'ոգեկոչեն:

Մենք կը հաւատամք որ մարմիններու գեղեցկութիւնը՝ նիգին ու մաքառումին առթած հիացումը՝ պայքարին ազնուութիւնը ու յաղթանակին փառքը անգին սփոփանք մը պիտի ըլլան հազար անգամ փորձուած՝ վիրաւոր հեւասպառ հայ հոգիներուն:

Նո՞ զի՞ներ եւ դուք բոլորդ որ ցեղին ապագայով կը մտահոգուիք, եկէք մեր մրցահանդէսին ու տեսէք հայ զարմին անհնշելի վերընձիւղը. եկէք ու հիացէք ձեր արիւնէն սերած հայ երիտասարդութեան հաւատաւոր ու արեւով լեցուն կեանքին ի տես եկէք ու պիտի անի ձեր մէջ սերը դէպի ձեր ժողովուրդը, պիտի

ամրապնդէ ձեր հաւատքը անոր լուսաւոր ապագայի ու յաղթանակի անոր անընկնելի ծգուումին հանդէպ:

Եկէք ծափահարելու ու փառաբանելու սերունդ մը որ ապրիլ կ'ուզէ, պայքարիլ կ'ուզէ ու յաղթել կ'ուզէ:

Կեանքի օրէնքը անողոք է, թոյլերը եւ տկարները, զօրաւորին գարշապարին տակ հեծելու դատապարտուած են. մինչ զօրաւորին միայն տրուած է անհասանելի բարձունքներու վերելքը:

Հայ նորահաս սերունդը բոլոր ազգերու մատղաշ սերունդին նման կը ձգտի այդ վերելքին:

Ոչ ոք իրաւունք ունի անոր այդ ձըգտումը ճնշելու, ան պիտի բարձրանայ, անոր թուիչքը չպիտի կասի:

Ճամբայ բացէք այդ սերունդին ճամբայ բացէք դուք բոլորդ եւ խրախոյսի ողջոյններ տուէք:

Ճամբայ բացէք եւ օրինեցէք այդ սերունդը որ կեանք ու արեւ կը պահանջէ:

Հ. Ա. Ը. Պ. ՊՈԽՎԱՐԻՈՅ

ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Այս տարի եւս, ինչպէս նախորդին, մեր Բարերար Անդամներէն գործի վաճառական Գարաեան եղբայրները կը նուիրեն 50 ձեռք սկառտական հագուստ՝ վճարելու անկարող նորդիր սկառտներու համար:

Ազնիւ նուիրատառները միշտ լաւագոյն տրամադրութիւնը ունեցած են Հ. Մ. Ը. Ա. Հանդէպ: Անոնք խիստ ոգեւորուած են այս շարժումով եւ գիտակցորէն կ'ընեն իրենց նուէրները: Հ. Մ. Ը. Ա. Հանդէպ շարժումին ի նպաստ իրենց յայտնած գաղափարները եւ հաւատքը մեր բոլորին չնորհակալութեան տարժանի են, այս ազնիւ ազգակիցները, այս շարժումին մէջ կը տեսնեն ներկայ եւ ազգայ հայ երիտասարդութեան փրկութիւնը եւ ինչ որ կ'ընեն այս առթիւ բոլորովին հայ պատանեկութեան օգուտը նկատի առնելով է որ կ'ընեն, առանց երկրորդական նկատումներու:

Զի բաւականանալով այսքանով անոնք յանձն առած են հոգալ Սկառտական Գիտելիքներու եւ Ծրագրի տպագրութեան ծախքը որ միութեանս գործին տարածման եւ ամրացումին կարեւոր միջոցներէն մին է: Ասկէ զատ մը տագրած են կարեւոր թիւով սկառտական վրաններ գնել ամառուան բանակումներու համար:

Մեր բոլորին չնորհակալութիւնները իրենց այս ազնիւ աջակցութեանը համար:

Հ. Մ. Ը. Ա. Հանդէպի ՆՐՋ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՖՈՒԹՊՈԼ

ՖՐԱՆՍԱ

Փ. Ա. Բ. Ի. Զ.

Կիրակի 12 Հոկտ. Հ. Մ. Բ. Մ. Բ կը դիմէ Սթատ Ֆրանսէի պահեստի խումբի կեղրոնատեղին, մրցում մը կնքելու համար:

«Սթատ Ֆրանսէ» որ կը ձգոի այս տարուան շօրե de Franceի առաջնութեան, կը համաձայնինք եւ մրցումը կ'որոշուի կիրակի կէսօրէ վերջ, Սէն Քլուի Սթատ Ֆրանսէի դաշտին մէջ:

Կիրակի է, Հ. Մ. Բ. Մ. Բ աղաքը vestaireի մէջ կը հանուին: Բոլոր սրտերը կը տրոփեն ու բոլորը մէկ կը մտադրեն փառաւոր մրցում մը կատարել նոյն օրը:

Անզիփացի գատաւորը սուլիչը կը սուլէ: Ֆրանսացիները արագօրէն կը յարձակին ըստ սովորութեան նշանակէտեր նշանակելու եւ իրենց հակառակորդը վհատեցնելու համար: Սակայն այս անգամ իրենց հաշիւը սխալ կ'ելլէ: Հ. Մ. Բ. Մ. Բ պողպատեայ յետոսապահները ետ կը մղեն յարձակումը դիւրաւ:

Կարզը յառաջապահներունն է: Անոնք ալ իրենց կարգին իրենց հիանալի «փաս»երով եւ հաւաքական խաղով, որ անգիփացի գատաւորին մասնաւոր ուշադրութեանը եւ շնորհաւորութեանը արժանացաւ, կը հարուածեն հակառակորդ բերդը: Սրդիւնքը զոհացուցիչ է և խաղին կիսուն մեր տղաքը կը յաղթեն արդէն 2ի դէմ 0 նշանակէտով:

Խաղին՝ երկրորդ կէսը կը սկսի: Գըլուխները տաքցած են, Հ. Մ. Բ. Մ. Բ յառաջապահները կը գերազանցեն ինքինքնին, ու նշանակէտերը կը շարուին 3, 4, 5, 6:

Սթատի տղաքը ապշած են, ու նրանակէտները շարունակուին 7, 8, 9, 10:

Դատաւորը եւ նոյնիսկ օտար զիտողները հիացման կոչեր կ'արձակեն: Խոկ Հ. Մ. Բ. Մ. Բ վարիչները կը խայտան ու կը խրախուսուին:

Հակառակորդները իրենց բոլոր ճիզը կը թափեն ու կը լաջողին նշանակէտ մը շահիւ: Ասոր վրայ մեր տղաքը բորբոքած վերջին սուլիչէն առաջ կը նըշանակէտն 14 եւ 42րդ նշանակէտերը, այսպէսով ջախջախիչ պարտութեան մատնելով ֆրանս: Խումբը:

Խաղին վերջ պտոյտ մը կատարեցինք Սթատի դաշտին շուրջ: ու տեսանք իրենց խաղացողներուն յատուկ սրաները, իրենց կանոնաւոր դաշտերն ու «տուշ»ի խցիկները, եւ մեր սրտերը հակառակ մեր փառաւոր յաղթասակին տիսրեցան:

Երեւակայեցէք որ Սթատի բոլոր խումբերը, կարող մարզիկներու ձեռքին տակ կանոնաւոր փորձեր կ'ընեն իրենց դաշտին վրայ, խոկ մեր տղաքը մրցումի կը սպասեն, կարենալ օտարին դաշտին վրայ խաղալու համար:

Ու այդ վայրկեանին, ամէնուն սրտէն թռաւ ա՛խ մը: «Ախ եթէ մենք ալ դաշտ մը ունենայինք ինչե՛ր չպիտի ընէինք:»

×

5 ՀՈԿՏ. Հ. Մ. Բ. Մ. Բ Ա. խառն Խումբը կը յաղթէ Belle Jardinièreի Ա. խումբին 3-2:

12 ՀՈԿՏ. Հ. Մ. Բ. Մ. Բ պահեստին կը յաղթէ Velo Club Arcueil Ա. խումբին 2-3:

19 ՀՈԿՏ. Ա. Տակո Սթօրթիւ Օրլէանի Ա. խումբը կը յաղթէ Հ. Մ. Բ. Մ. Բ պահեստիին 10-1:

26 ՀՈԿՏ. Հ. Մ. Բ. Մ. Բ Ա. խումբը կը յաղթէ Սթատ Սէն Լոի Ա. խումբին 2-1:

26 ՀՈԿՏ. Ա. Տ. Տակո պահեստիին 4-0:

9 ՆՈՅ. Է. Տ. Ջուվիս Ա. Բ. կը յաղթէ Հ. Մ. Բ. Մ. Բ պահեստիին 5-1:

16 ՆՈՅ. Հ. Մ. Բ. Մ. Բ Ա. Բ. ն կը յաղթէ Ա. Տ. Տակո Ա. Բ. ին 3-1:

Կիրակի 9 Նոյ. Հ. Մ. Բ. Մ. Բ պահեստիին վրայ:

Stade Compienois խումբը որ division d'honneur է եւ Oise գաւառի champion, հրաւիրած ըլլալով մեր Ա. խումբը, կիրակի մեր տղաքը գացին Compiégne:

Նկատելով որ սոյն քաղաքը առաջին անգամ կ'ընդունէր հայ խումբի այցելութիւնը



ՓԱՐԻԶԻ ՄԱՐԶՈՏՈՆԵՆ

800 մետր վազքի մեկնումը

Մրցումներու արձանագրութեան դիւանը

տեղացի խումբը ջանք չէր խնայած թերթերու եւ ազդերու միջոցաւ գովելու խումբին խաղարկութիւնը, ծանօթացնելու համար զանոնք տեղացի ժողովուրդին:

Խաղը սկսաւ ժամը 3ին, Compiègneի հիանալի մարզաշտին վրայ, 500ի մոտ հանդիսականներու ներկայութեան:

Մեր տղոց պատարիւն եւ հանդարտ խախարկութիւնը եւ չափաւոր փասերը, հիացում կը պատճառէին ժողովուրդին, որ յաճախ կը պախակէր իր յաղթանդամ խաղացողներու կլքուտ եւ կատաղի խաղը, որ պատճառ եղաւ մեր տըղոցմէն 5 հոգիին վիրաւորուելուն, այնպէս որ երկրորդ խաղամասին մեր խումբը կը խաղարմէկ հոգի պակասով եւ երեք հոգի ալ կաղն ի կաղ խաղացողներով:

Հակառակ ատոր Հ. Մ. Բ. Մ.ի տղաքը յաղթանակը տարին 2ի դէմ 3 աշանակէտով, տեղացի ժողովուրդին որսաթընդուս ծափերուն մէջ:

Ք. Ժ.

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՍԼԻՎԵՆ-ՊՈՒՐԿԱՋ

Հ. Մ. Բ. Մ.ի Պուլկարիոյ Շրջ. Վարչութեան կարգադրութեամբ, այս տարի կազմակերպուած է ֆութազոլի Ռուբենուամը, Պուրկազի, Սլիվէնի և Ֆիլիպէի ճիւղերուն միջեւ, Հ. Մ. Բ. Մ.ի բաժակին համար:

Ա. Մրցումը (քոլոն Փինալ) տեղի ունեցաւ Պուրկազի և Սլիվէնի ճիւղերուն միջեւ, Պուրկազի մէջ:

Մրցումը կատարուեցաւ օգոստ 17ին տեղւոյս «քաղարմա» ամէնամեծ խաղադաշտին վրայ, ի ներկայութեան հայ եւ պուլկար 1000է աւելի երկու սեռէ բազմութեան մը: Իրաւարարի պաշտօնը կը կատարէր տեղւոյս պուլկ: Իրաւարարական յանձնախումբին կողմէ նշանակած Պուլկար մարզիկ մը:

Ա. հարուածը Սլիվէնին էր: Խաղը սկսաւ խանդագառ: Հաղիւ 40 վայր-

կեան անցած, Պուրկազգիք զեղեցիկ յառաջացումով մը նշանակէտ մը արձանագրեցին: Խաղը աւելի տաքցաւ, սակայն երկու կողմանէ ալ թափուած ճիգրը անցան ապարդիւն և առաջին խաղամասը լրացաւ 0-1 ի նպաստ Պուրկազի:

Բ. Խաղամասին ֆաուլ մը օգտագործելով, Սլիվէնցիք նշանակէտ մը արձանագրեցին եւ խաղը վերջացաւ 1-1 հաւասար: Մրցումը 30 վայրկեան եւս շարունակուեցաւ, դարձեալ անարդիւնք:

Ուրիշ մրցում մը պիտի կատարուի Սլիվէնի կամ Ֆիլիպէի մէջ, Շրջ. Վարչութեան կողմէ տրուելիք որոշումին համաձայն:

«Նոր Շիշլի» ՊՈՒՏԿԱՐԻՈՅ ՄԵջ

Պոլսոյ «Նոր Շիշլի» հայկ. զօրաւոր գութպոլի խումբը, ժամանակէ մը ի վեր կը բանակցէր Սօֆիայի ամէնառուժեղ խումբերէն «Լէվսքի»ի հետ, Պուլկարիոյ մէջ կարգ մը մրցումներ կատարելու համար: Բանակցութիւնները յաջողած ըլլալով «Նոր Շիշլի» խումբը օգոստոսի առաջին կիսուն եկաւ Պուլկարիա, Պուրկազի ճամբով: Խումբը Պուրկազ հասաւ 0 գոստոս 7ին, շոգենաւով, եւ դիմաւորուեցաւ Հ. Մ. Բ. Մ.ի անդամներուն և հայ հասարակութեան կողմանէ: Նոյն օրը շոգեկառքով խումբը մեկնեցաւ Սօֆիա, ուր եւս Հ. Մ. Բ. Մ.ի 60 անդամները, և Լէվսքիի ներկայացուցիչները դիմաւորած են զայն: Կայարանին մէջ բարի գալուստի զեղեցիկ խօսքեր ըրած են Պ. Գ. Լ. Ս. Գաղանճեան, թի. Փափաղեան և «Լէվսքի»ի ներկայացուցիչը, որոնց պատասխանած է «Նոր Շիշլի»ի վարչութեան ատենադպիր-ներկայացուցիչ Պ. Յ. Թիւթիւնճեան:



Մրցումները տեղի ունեցած են օգոստոս 9ին եւ 10ին, «Լէվսքի»ի խաղաշտին վրայ:

Ա. օրը մրցած են երկու խումբերու պահեստիները, իսկ երկրորդ օրը բուն մրցումը, ճակատած են առաջին խում-

բերը: Մրցումը անցած է շատ բուռն եւ հայ տղաքը զեղեցիկ խաղարկութիւն մը ի յայտ բերած են:

Ա. խաղամասը անցած է 1-1, հաւասար: Բ. խաղամասին Պուլկարները երկու կոլ ըրած են, մերոնք մէկ: Խաղին վերջաւորութեան քիչ մնացած, մերին-ները շահած են բէնաթի (ազատ հարուած) մը որը մութին պատճառով պուլկար իրաւարարին կողմէ չէ տեսնուած: Եւ այսպէս մրցումը վերջացած է 2-3ով ի նպաստ Պուլկարներուն, ինչ որ պատւաքեր արդիւնք մըն է «Նոր Շիշլի»ի համար, երբ մանաւանդ նկատի առնենք, որ «Լէվսքի» Պուլկարիոյ ամենազօրաւոր խումբերէն մին է և 7 խաղացող կուտայ ազգային խումբին:

Պուլկար թերթերը բաւական զովասանքով կ'արտայայտուին հայ տղոց մասին եւ անվերապահնօրէն կը խոստովանին, որ եթէ մութը պատճառ չըլլար, հայկ. խումբը առնուազն հաւասար արդիւնք մը պիտի ունենար «Լէվսքի»ի հետ:

Մրցումը մեծ հետաքրքրութիւն ըստեղծած է: Ներկայ եղած են 5-6000 հանդիսականներ: Ծխախոտի «Մակեգոնիա» ընկերութիւնը, 100ական սիկար տրամադրուած է յաղթող խումբին իրաքանչիւր խաղացողին:



«Նոր Շիշլի» օգստ. 12ին ուրիշ մրցում մըն ալ ունեցած է Բերնիքի «ՔրաՔրա» խումբին հետ (պուլկ. զօրաւոր խումբ մը) որմէ 5-6ով պարտուած է: Մեր տղաքը վիրաւորուած ըլլալով միայն 8 հոգիով խաղացած են:

Պուլկազ

Գր. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ





ՅԵՆ-ՓԱՌՈՅԻ (ՊՐԱԳԻԼԻԱ) ՖՈւլթալու Ա. ԹԻՄԸ

ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ

ՊՈՒԷՆՈՍ ԱՅՏԻՍ (Արժանթին)

27 Օգոստ. 930

Հաճոյքով տուցանք Զեր նամակները:
... Միութիւնս կազմուած է տեղւոյս լաւագոյն երիտասարդութենէն, որոնք ամեն չանք եւ զահողութիւն յանձն կ'առնեն նոր սերունդին մէջ տարածելու եւ ամրացնելու համար չ. Մ. Ռ. Մ. ի գործը:

Միութիւնս կը կազմակերպէ տարեկան հանսդէներին իր պիտածէին ի հաշիւ: Ունինք մեր յատուկ մարզադաշտը եւ ֆութալի զօրաւոր խումբը որ տեղական խումբերու հետ մըցումներ կունենայ յաճախ: Ունինք նաեւ պասբէթ-սրուի եւ աթլեթիքի խումբը:

Մօտ ատենէն պիտի կազմակերպէ Ողիմական մըցումներ, որոնց մանրամասնութիւնը կը գրենք Զեզ:

Թղթակից

ՍԱՆ ՓԱՌԻԼՕ (ՊՐԱԳԻԼԻԱ)

27 Օգոստ. 930

Հայ Ականուտի թիւերը թղթատելով կը տեղեկանք բոլոր հայ գաղութներու մէջ չ. Մ. Ռ. Մ. ի կերպին:

Սան-Փառուլոյի մասնաճիւղը կազմուած է 1929ի օգոստոսին, ներկայիս 50է աւելի անկարութեան: Վերջերս ունեցանք վարչական նոր ընտրութիւն հետեւեալ կազմով:

Մ. Խաչատուրեան (ատենապետ) Մ. Գասարեան (քարտուղար), Ա. Զերքէղեան (գանձա-

պահ), Ս. Թադէոսեան (ակառուտական կազմակերպութեան վարիչ), Ա. Գալուստեան, Յ. Զորեան, Յ. Ղափանեան՝ խորհրդականներ:

Ունինք երկու կանոնաւոր ֆութալուի խումբ որ ամէն կիրակի կը մըցին ՊՐԱԳԻԼԻԱԿԱՆ խումբերու հետ:

Այս ամրի նախաձեռնարկ եղանք կազմակերպելու Ապրիլի Ագատոնը որ, լաւ ընդունելութիւն գտաւ գաղութիս մէջ. մօտ օրէն կը կազմակերպէնք գեղարուեստական ներկայացում մը մարզական խաղերով:

Ահա, այսպէս քայլ առ քայլ կը յառաջանանք, վրկելու համար նոր սերունդը օտարացումէ եւ բարոյական անկումէ:

ՄԱՐՍԻՑԻ

Մարսէյլ 9 Նոյ. 930

Կիրակի տեղի ունեցաւ չ. Մ. Ռ. Մ. ի ՕԼԻՄՊԻՔ Վոլոնէի մըցումը, Գամուէն, 400 հոգի ներկայ էին: Հակառակ մեր երկու խաղացողներու տկարութեան պատճառով բացակայելուն, մերինները յաղթեցին մէկի գէմ երկու կոլու. մըցումը եղաւ հետաքրքրական. անցեաւ տարի այս միեւնոյն խումբը կուի տարբերութեամբ յաղթած էր մեղլի:

Մեր փոքրերու խումբը, նոյնպէս տկարկալմով յաղթեց կ. Ա. Թօնէէնին, Օի դէմ Յ կոլով եւ իր գասաւորումին առաջին տեղը կը գրաւէ ՕԼԻՄՊԻՔ տը Մարսէյլ Ժէիւնէօրներու հետ:

Բ. Խումբը յաղթուեցաւ Բ. Լ. Մ. ի խումբէն Յի դէմ 1 կոլով:

Փոքրիկները նայութէն յաղթուեցան Շադօ
կոմպէքի ստոքիկներէն Յի դէմ 2 կուսլ:

Կիբակի Հ Նոյ. բացի երկպարու խումբքէն բա-
լոր խումբերը անպաշտօն (ամբիքալ) մըցաւմներ
կատարեցին եւ հետեւեալ արդիւնքները ար-
ևին

Խառն խումբը հաւասար մնաց 4-4 Մբր-
քինկ Գիւղ տը Մարտէյլի առաջին խումբին
շետ, շատ գոհացուցիչ արդիւնք մըն է այս:

Երկրորդ խումբը հաւասար մնաց Լա Սէյնի շամապատասխան խումբին հետ, 4-4, շատ աւելի լաւ արդիւնք մը կ'սպասուէք, նկատի ունենալով Բ. խումբին կազմը:

Փոքրերը յաղթուեցան Սբորթինկէն 4-3:
Փոքրիկները նոյնպէս յաղթուեցան Սէն Լուիէն
2-0 պակաս խաղացած ըլլալով։ Երրորդին մրցավը տեղի չունեցաւ օդին անհպաստ ըլլալուն պատճառաւ։

16 Նոյ. Կիբակի պարտութեան օր մը եղաւ
Հ. Մ. Ի. Մ. ի խումբերուն, բացի Ա. եւ Բ. էն
որոնք չխաղացին: Օրսւան կարեւոր մրցումը
փոքրերունն էր, որոնք զրկուած իրենց լաւա-
գայն խաղացող՝ Քէջէճեանէ որ հիւանդ է, չը
կարողացան իրենց վրայ դրուած յոյժերը իրա-
կանացնել զգացնելով միշտ բացակային պա-
կասը: Պարտութիւնը եղաւ Օ-4, երկու կօլը «բե-
նալթի»ով: Մեր փոքրիկները առանց յուսահա-
տելու եղանակի այս առաջին պարտութենէն
պիտի աշխատին վրէժի մրցումին յազթական
դուրս գալու համար. բան մը որ իրենց կարո-
ւութենէն վեր չէ: Մեր Գ. Խումբը պարտուե-
ցաւ Ա. Ա. Միւսիսիբալէն 5-2, իսկ Միւսիմնե-
րը Բարձանս Սբորթէն 2-0:

1500 ՄԵԹԾԸ 5 ՎԱՅՐԿ. 49¹/5 ԵՐԿ.ԻՆ

(ԱՇԽԱՐՁԻ ՄՐՑԱՆԿ)

Ֆրանսացի մարզիկներուն վերջին
ատենաներս աթլետիք խաղերու մէջ ըրած
մեծ յառաջդիմութիւնը իր պսակումը
ունեցաւ 5 չոկտ. կիրակի օր Բօրթ Մօ-
լիթօրի մարզարանին մէջ, ժիւլ Լատու-
մէկի ձեռքով — աւելի ճիշտ պիտի ըլ-
լար բաել ոտքով:

Արդարեւ այդ մարզիկը որ երկու
տարիէ ի վեր աչքառու յաղթանակներ
կը տանէր 1500 մելթը գաղքի մրցումնե-
րուն մէջ, կիրակի օր յաջողեցաւ վեր-
ջապէս կոտրել այդ հեռաւորութեան աշ-
խարհի մրցանիշը, զայն գաղելով՝ Յ
վայրկեան 49^{1/2} երկիրկեանէն։ Յարդ

այդ մրցանիշը կը պատկանէր զերժանացի Օթօ Բէլլէրի 5 վայրկեան 51 երկ-վայրկեանով:

Առելի լաւ ըմբոնելու համար 3 վ.
49½ երկվ.ի զրեթէ անհաւատալի ար-
դիւնքին իրական արժէքը՝ կը բաւէ ըսել
թէ հայկական մրցանիշը 4 վայրկեան
55 երկվալրկեան է (Կ. Թաշճեան), իսկ
չ. Մ. Բ. Մ.ի վերջին մարդահանդէսին
մեր մարզիկները 1500 մեթրը կտրելու
համար պէտք ունեցան 3 վայրկեանէն
աւելի ժամանակի մը:

Ժիւլ Լատումէկով Թրանսացիք կ'ունենան աթլեթիզմի մէջ երկու համաշխարհային մրցանիշեր, միւսը կը պատկանի Սէբաֆէն Մ'արթէնի՝ որ 800 մեթր վազած է մէկ վայրկեան $50^{\circ}/_5$ երկվայրկեանէն:

ՄԵՐ ՏԱՆ ՍՈՒԳԵՐԸ

Կարճատել հիւանդութենէ մը ետք,
Հրաժեշտ տուալ կեանքի, իր 25 տարե-
կան հասակին մէջ, Տէսինի չ. Մ. Լ. Մ. ի
վառվուն անզամեներէն

ՍԱՐԳԻՍ ՅԱԿՈԲԵԱՆ

Դագաղին կը հետեւէին չ. Մ. Ը. Մ. ի
սկառատները 30է աւելի օրիորդներ և 600ի
մօտ հայրենակիցներ: չ. Մ. Ը. Մ. ի
կողմէ Պ. Ն. Գագագեան ցաւակցական
ուղերձ մը կարդաց:

Մեր ցաւակցութիւնը իր պարագա-
կերուն և Տէսէնի մասնաճիւղի անդամ-
ներուն:

կարճատեւ հիւանդութիւնով մը կոր-
սնցուցինք 22ամեայ եռանդուն եւ զբ-
ւարթ երիտասարդ մը, չ. Մ. Բ. Մ. ի Ան-
կիէնի մասնաճիւղի անդամներէն՝

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

իր մահը անակնկալ եղաւ բոլորին համար

Մեր ցաւակցութիւնը իր վշտակիր մօրք եւ եղբայրներուն:

Այս թիւին նկարները, սիրով տրամադրած է մեզ մեր ընկերներէն Պ. Գրիգոր Ճօլօլեանի *ARAX* լուսանկարչատունը, 9, Rue papillon, paris(9e).

ՎՐԱՅԱԿԱՆ

ԱՄԵՐԻԿԱ (Հ.Ն.)

ԵՌԻՆԻԾԻ ՍԻԹԻ.— 15 հոկտեմբերին տեղի ունեցած Ամերիկայի Հ. Մ. Լ. Մ.ի ծրջ. Պատգամաւորական ժողովը, ներկայ էին՝ նու Եօթի, Եռնրինսիթի, Ամֆորիայի, Բաթէրսընի եւ Քէմարնի պատգամաւորները, Ֆիլատէլֆիան կը բացակայէր այս անգամ։

Տեղեկակիրներու ընթերցումէն վերջ ժողովը անցու օրակարգի, բոլոր պատգամաւորներն ալ գիտակցորէն մօսեցան Հ. Մ. Լ. Մ.ի զործին, եւ սրչեցին անոր ոգին վառ պահել եւ տարածել ամերիկահայ երիտասարդութեան մէջ։

Նկատի առնեցաւ սկառտական շարժումը եւ կազմակերպութեան խնդիրը։

Ժողովը գրոշեց մասնակցիլ Փարէիդ զումարելի լուրջ, Պատգամաւորական ժողովին եւ պատգամաւոր նշանակեց Պ. Տիգրան Խոյ տանը։

Վարչակ մն ընտրութեան զալով յարմար տեսաւ լիազօրութիւն տալ Պ. Արշակ Սահակւանին (Յակոբեան) կազմելու Շրջանային Վարչութիւն մը։

Այս տալի լաւագոյն զործունէութիւնը ունենալու հաւաստումներով ցըրուեցաւ ժողովը։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԴՈՒՄԱՆԻԱ

Հ. Մ. Ը. Ը. ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, 2 նոյեմբեր, տեղի ունեցաւ Հ. Մ. Լ. Մ.ի Ռումանիոյ շրջանի 8րդ պատգամաւորական ժողովը։

Ժողովը տուաւ հետեւեալ որոշումները։

Մարզական եւ սկառտական աշխատանքները կարելու համար 7րդ Շրջ. ժողովին տուած լայն ապակեզրոնացման դրութի նը ջնջելով՝ Հ. Մ. Լ. Մ.ի շարքերուն հետ կապուած բոլոր աշխատանքները կեզրոնացուց կեզրոնական եւ մասնաճիշային վարչութեանց ձեռքը։

Այս առօին յանձնարարուեցաւ նորութիր Կե լր. Վարչութեան, կազմել

մարմնակրթական նոր զրութիւն մը Հ. Մ. Լ. Մ.ի բոլոր շարքերուն համար եւ անոր գործադրութիւնը պարտադրել բոլոր մասնաճիշերուն։

Մասնակրկիտ քննութենէ մը յետոյ որոշուեցաւ մնայուն փոստի զումարը եղող 350,000 լէյը այս տարի ևս պահել անձեռնմխելի, իսկ շրջաններու տրամադրութեան տակ զնել միայն այս զումարէն դուրս գտնուած եւ տոկոսներէ դոյացած մօտ 57,000 լէյի զումարը։

Որոշեց անպայման կազմակերպել Ռումանիայ ողիմպիականը 1931 տարեցրջանին, ի հարկին ապահովելու դրացի երկիրներու Հ. Մ. Լ. Մ.ի կազմակերպութեանց մասնակցութիւնը։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ՇՐՋ. ԲՆԴՀ. ՊԱՏԳԱՄԱԿՈՐԱԿԱՆ
ԺՈՂՈՎ. ԵՒ ՅԱՐԳԱՆՔԻ ՅԻՇԱՏԱԿ

ԱՅԻՆՔ 5 Նոյ. 1950

Ի յիշատակ հայ մարմնակրթանքի վեթերաններ Շաւարշ Քրիսեանի եւ Վահան Չերազի, եւ յանուն Հ. Մ. Լ. Մ.ի սրբազն իտէալին նահատակուող Հ. Մ. Լ. Մ.ական մարզիկներու եւ սկառտաներու, Հ. Մ. Լ. Մ.ի Յունաստանի Կեզր. Վարչութիւնը հոգեհանգստեան արարութիւն կատարեց կիրակի, Նոյեմբեր 2ին Աթէնքի Հայոց եկեղեցին մէջ։

Ներկայ եղան Կեզր. Վարչութեան անդամներ, մասնաճիշային վարչութեանց ներկայացուցիչները, սկառտախմբապեանները, աստիճանաւորները եւ խմբակները։

Ծաղկեպսակներով զարդարուած սրբարեմին շուրջ հաւաքուած էին աստիճանաւորները։

Արարողութիւնը կատարուեցաւ պարզ եւ տպաւորիչ։

X.

Ցերեկէ վերջ, առաջնորդարանին մէջ զումարուեցաւ Յունաստանի շրջանի 5րդ պատգամաւորական ժողովը, ներկայ ե-

դան Գոքինիոյ, Լիբագմայի, Ֆիքսի, Նոր մալէրօյի, (Աթէնքի շրջան) Ռէթիմոյի, Գանտիոյ, Սելանիկի, Տրամայի և Գավարյի պատղամաւորները:

Յունաստանի Կեղրոնական վարչութիւնը կարդաց իր միամեայ բարոյական եւ նիւթական գործունէութեան տեղիկազիրը: Բոլոր պատղամաւորներն աւ խիստ զոհացուցիչ զտան տարուած աշխատանքը:

Որոշուեցաւ ազգային իշխանութեանց զիմում կատարել նիւթական կանոնաւոր օժանդակութեան համար: Յ. պաշտօնի կոչուի կարող և ազգեցիկ մարդիչ մը բոլոր Յունաստանի շրջանին համար: Մարզիչը ճական ամիս պիտի զործէ հին եւ նոր Յունաստանի շրջաններուն մէջ:

Մասնաւորապէս զնահատութեան արժանացաւ Սելանիկ, Տրամա և Գավարյա իրենց սկառատական կազմակերպութեանց համար:

Հաշուեկշիռն յայտնի եղաւ որ Աթէնքի Կեդր. Վարչութիւն 42,000 տրախմի հասոյթը ունեցած էր, և 37,000 ծախս պատրաստ գումար 5000 տրախմի: Երբշաններէն կարեւորագոյն նիւթական գործունէութիւն ունեցած էր Սելանիկը 55,000 տրախմի ելեւմուտքով:

Նորընտիր վարչութեան ընտրութիւնը տուաւ հետեւեալ արդիւնը:

Պ. Պ. Մ. Յաբէթեան, Յ. Փափագեան Յ. Կիւրինլեան, Կ. Շահինեան, Հ. Տէտէեան, Արմ. Տէր-Յակոբեան, Պ. Սարդիսեան:

Սելանիկ

ԹՂԹԱԿԻՑ

ԳԵՂԵՑԻԿ ՊԱՏԿԵՐ ՄԸ

Հ. Մ. Հ. Մ. Պ. ՊՈՒԼԿԱԿԻՈՅ ՄԷՋ
ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ԿԵՍՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Հ. Մ. Հ. Մ. Պ. ինչպէս ուրիշ տեղեր, նոյնպէս Պուլկարիոյ մէջ ունի բաւական զօրաւոր կազմ մը... բազմաթիւ անդամներով եւ տասէ աւելի մաս-

նաձիւղերով: Կ'արժէ որ, «Հայ Սկառտոյի մէջ ծանօթութիւններ ուանք իւրաքանչիւրին մասին»:

ՅԻՒՂԵՊԵ

Հ. Մ. Հ. Մ. Պ. Պուլկարիոյ ամէնազօրաւորը կը համարուի, իր ոէջ կը հաշուէ 274 անդամներ, որոնց 58ը օժանդակ, 64ը մարզիկ եւ թւրիստ, 42ը սկառտու, 56ը գայլիկ, 56ը սարիկ և 43ը սկառտուհիներ են: Ունի նաև Մխիթարեան և Ազգ. վարժարս ններու մէջ 90ի մօտ գայլիկներու անջատ բաժին մը որ կը հովանաւորուի տեղւյն մասնաճիւղի վարչութեան կողմանէ:

Գերջերս պառակտում էր ծայր տըւած էր Ֆիլիպէի մէջ, որու հետեւանքով, Հ. Մ. Հ. Մ. Պ. կարգ մէտ անդամները բաժնուած էին Հ. Մ. Հ. Մ. էն, հիմնելով «Շանթ» մարզականը Մասնաճիւղը առանց ազգուելու այս սնջատումէն կը շարունակէ իր խանդակառ զործութիւնը:

Ֆիլիպէն ունի նաև իլ Ֆութպոլի խումբը, որ պուլկարիոյ շրջանի ամէնազօրաւոր հայկական խումբն է: 1925էն ի վեր կ'անդամակցի Պուլկ. մարզական Ֆէտէրասիոնին:

ՊՈՒԼԿԱԿ

Հ. Մ. Հ. Մ. Պ. Պուլկագի Մասնաճիւղը, որ հնմուած է 1924ին, մեր շրջանի ամենազամակերպ մասնաճիւղերէն մէկն է: Ունի 110 անդամներ, որու ցմէ 50ը օժանդակ, 50ը մարզիկ, 58ը սարիկ և 22ը սկառտուներ են:

Սկառտուներու եւ գայլիկներու բաժինը կ'ունենան արշաւներ, հաւաքումներ և զիտելէքներու դասա անդութիւններ :

Կայ նաև ֆութպոլի բաժին մը, որ մէկուկէս տարուան կեանք ոնի եւ կունենայ յաճախակի մըցումներ:

Մասնաճիւղը ունի հաւաքայր-մարզարան մը, որ իր իսկ սեփս կան միջոցներով երկու տարիէ ի վեր լը պահէ:

Կ'անդամակցի Մարզական Ֆէտէրասիոնին:

ԱՅՑԻԱ.

Հ. Մ. Բ. Մ. ի Սօֆիայի Մասնաճիւղը, որ ժամանակ մը այնքան կազմակերպ վիճակ մը կը ներկայացնէր, ներկայիս ցաւալիօրէն՝ պառակտուած է ու բաժնուած է երկու մասի. որոնցմէ մին ինքնապուխ է չուզէր հնագանդիլ Շրջ. Վարչութեան ու կապուած է Պուլկարներուն, իսկ միւսը, — բայն Հ. Մ. Բ. Մ. աւելի ովեւոր ու կազմակերպ վիճակ մը կը ներկայացնէ: Ունի սկառու. եւ զայլիկներու բաժին, 28-30 զայլիկներ, և սկառուներ և 18 պարիկներ ու սկառունիներ որոնք լծուած են կանոնաւոր աշխատանքի:

ԱԼԻՎԵՆ

Աս մասնաճիւղը հիմնուած է 1925ին և ունեցած է օգտակար կեանք մը: 1925-26 տարեցրջանը, անոր ամէնափայլուն շրջանն է եղած: Ներկայիս իր մէջ կը հաշուէ 100ի մօտ անդամներ, որոնց մէծ մասը մարզիկներ և փութպոլիտներ են: Մասնաճիւղը սկզբնական շրջանէն սկսեալ, իր պլանոր ու շաղրաբժիւնը դարցուցած է փութպոլին վրայ:

1924էն ի վեր կ'անդամակցի Պուլկ. մարզական դաշնակցութեան:

ԱԹ. ԶԱԿՈՐԾ

Աթ. Զակորայի մասնաճիւղը իր մէջ կը համրէ 25 զործօն և 10է աւելի օժանդակ անդամներ:

Աս մասնաճիւղը մինչեւ 1927 միշտ ալ վարդի կեանք է ունեցած, սակայն այդ թուականէն ասդին զործի զլուխ անցնող նոր վարիչներու փորձառութեան և թափած ջանքերուն շնորհիւ, բաւական կազմակերպուած է ու բոլորած արդիւնաւոր շրջաններ:

Ներկայիս ունի խաղաղ ու ապահով գործունէութիւն մը:

Վ.Ա.ԽՆԱ

Վանայի մասնաճիւղը տարիներու ընթացքին ունեցած է տարութեր կեանք մը՝ մերթ կազմակերպ ու արգիւնաւոր շրջան մը բոլորելով և մերթ ալ ան-

կազմակերպ եւ մեռած վիճակ մը ներկայացնելով:

Ներկայիս, կարգ մը հին ու սրացաւ Հ. Մ. Բ. Մ. ականներ մասնաճիւղին դեկը ձեռք առած են, ու կը ջանան կազմակերպել զայն և իր նախկին մակարդակին հասցնել:

Մասնաճիւղը այժմ ունի մարզական և սկառուտական բաժիններ, որոնք լրձուած են աշխատանքի:

ԱՅԹՈՒ

Պուրկազի մասնաճիւղի անդամները, վերջերս այցելելով Այթոս, տեղույն մէջ ալ հիմնեցին Հ. Մ. Բ. Մ. ի մասնաճիւղ մը, որ ներկայիս իր մէջ կը հաշուէ 40ի մօտ անդամներ: Տեղույն երիտասարդութիւնը մտած է Հ. Մ. Բ. Մ. ի շարքերուն մէջ և լծուած տշխատանքի: Ունի նաև զայլիկներու բաժին մը:

Հ. Մ. Բ. Մ. ը մասնաճիւղեր ունի նաև Ռուսութիւնի, Խասքօվայի և Թ. Փաղարճրզի մէջ, որոնք ևս առաւել կամ նուաղ չափով կազմակերպ են և ունին օգտակար զործունէութիւն:

Պուրկազի

ԳՐԻԳՈՐԻԿ

ՊԱՏԳԱՄԱՀՈՐԱԿԱՆ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Ձեռնարկուած է Հ. Մ. Բ. Մ. ի Պատգամաւորական Ընդհ. Ժողովի գումարմանայս առթիւ բոլոր շրջաններուն զրկուած է շրջարերական մը եւ օրակարգի նիւթերը: Յարմար տեսնուածէ ժողովը գումարել Փարիզի մէջ եթէ մեր շրջանները համամիտ գտնուին: Թուական որոշուած է 20 Դեկտ. 1930ը:

Սոյն ժողովին պիտի ընտրուի Ընդհ. Կեդրոնական Վարչութիւն մը, որ պիտի վարէ համաշխարհային Հ. Մ. Բ. Մ. ի գործը: Այսպէսով միանգամ ընդ միշտ իր բնականոն հունին մէջ մտած պիտի ըլլայ Միութեան զործունէութիւնը, որ դժուարութիւններու հանդիպած էր 1922ի Պոլսոյ զաղթէն ասդին:

ԶԱՆՈԶԱՆ

ԺԱՄԱՆՈՒՄ

Նիւ Եօրքէն Փարիզ ժամանեց նոյեմբերի մէջ, Հ. Մ. Ռ. Մ. ի հիմագիրներէն և եռանդուն աշխատակիցներէն Պ. Տիգրան Խոյեան, մի քանի ամիսներ իր ծնողքին մօտ անցընելու համար:

Մեր սիրելի Տիգրանը որ Պոլսէն Հայաստան մեկնած էր Վ. Չերագի և Օ. Եազմաճեանի հետ իր Հ. Մ. Ռ. Մ. ի գործին կազմակերպիչ, վերադարձին՝ Սմերիկա գացած և հաստատուած էր Նիւ Եօրք, հոն ևս ուժ տուալիր սիրած գործին, հետեւելով Տ-Տրինիդադ Կոլլեջի մարմնակրթական ճիւղին՝ իր Հայաստանի ներկայացուցիչ, ուրկէ վկայուած է Բ. Պ. Է. (պահաւոր ֆիզիքական դաստիարակութեան) *Physical Director* տիտղոսով:
Ներկայիս ան գործոն գեր առած է Սմերիկայի շրջանին մէջ:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Հ. Մ. Ռ. Մ. ի լաւագոյն բարեկամ եւ անոր ամրացումին համար Պուլկարիոյ շրջանին մէջ աշխատող, Ֆիլիպէի Մխիթարեան վարժարանի վարիչ, Տօքթ Հ. Սահակ Կողեան, Ռումանիոյ հայ կաթոլիկ հասարակութեան առաջնորդ կարգուած է, Վատիկանի եւ Ռումանիոյ կառավարութեան համաձայնութեամբ: Իստէ կը շնորհաւորհենք այս պատուաբեր պաշտօնը յաջողութեան մաղթանքով: Կը յուսանք որ յարգելի Վարդապետը իր թեմին մէջ կարելի աջակցութիւնը պիտի տայ իր այնքան սիրած Հ. Մ. Ռ. Մ. ի գործին:

Պ. Օնսիկ Դարբինեան, մէր անձնէր Հ. Մ. Ռ. Մ. ականը, սիրով նուիրած է, իր նախկին եւ նոր սկառտական ու մարզական նկարներու ճոխ հաւաքածոն, տրամադրուելու համարնոր կազմուելիք Ընդհ. Կեղրոնի Վարչութեան զրասենեակին:

ԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ՍՏԱՑԱՆՔ

Փարիզի Հայ Տիգրանց Միութեան Կարմիր Խաչի մասնաճիւղին տրամադրած գեղօրայքը, յատկացնելու համար իրը շրջուն գեղարան Հ. Մ. Ռ. Մ. Ա. և Բ. Գութպոլի խումբերուն:

— Mr. J. Vermeulen ևս տրամադրած է երկու սիրուն պայուսակներ յատկացւելու համար շրջուն գեղարանի գեղերու և գործիքներուն համար:

ԱՐԴԻԱԿԱՆ ՄԱՐԶՈԱՐԱՀ ՄԸ

Լիկ Փարիզին տը ֆութպոլի սեփական շէնքին երկրորդ յարկին վրայ յարդարուած է արդիական մարզապահ մը, որուն հակողութիւնը յանձնուած է Պ. Մ. Մալումեանի:

Այդ մարզասրահը կը պարունակէ բազմաթիւ գործիքներ, տաք եւ պաղջուրի մաքուր սրահ մը, ինչպէս նաև մասաթի սենեակ մը: Փարիզի ֆութպոլի դատաւորները շաբաթը անգամ մը պիտի երթան մարզուելու հոն, Պ. Մալումեանի գեկավարութեան տակ:

Մասնաւորապէս ձմեռուան եղանակին համար այդ մարզասրահը կոչուած է մեծ ծառայութիւն մը մատուցանելու անոնց համար որոնք կ'ուզեն իրենց մարմինը մարզել:

ԲԱԺԱԿԻ ՄՐՑՈՒՄ

«Ապագայ» Ռերթը այս անգամ կազմակերպած է ֆութպոլի թուրնուա մը ֆրանսայի բոլոր Հայ խումբերուն մասնակցութեամբ: Մասնակցող խումբերը պարտաւոր պիտի ըլլան ներկայացնել *Licence A* ունեցող խաղացողներ: Յաղթական խումբը տարի մը պիտի պահէ «Ապագայ»ի մեծ բաժակը. իսկ ամէնէն օրինապահ խումբը պիտի ստանայ դրօշ մը: Մրցումը տեղի կ'ունենայ դեկտեմբեր 27-28 շաբաթ եւ կիրակի օրերը Սթատ էլիզապեթի սէջ: Արձանագրուած են՝ Հ. Մ. Ռ. Մ. ի Փարիզի, Մարսէյլի, Լիոնի, Վիէնի, խումբերը:

ՍԻՐԵԼԻ ՍԿԱՌԻՏՆԵՐ, ՍԿԱՌԻՏՈՒՅԻՆԵՐ ԵՒ ԳԱՅԼԻԿՆԵՐ

Յուար երկինքի տակ տարի մըն ալ կ'անցնի ահա, տորի մըն ալ աւելցաւ մեր հայրենաբաղծութեան վրայ, եւ սակայն դուք քայլ մըն ալ առաջ գացիք ձեր գեղեցիկ իտէաներուն մէջ եւ ձեր ազգային գիտակցութիւնն ալ աւելցաւ նոյն չափով:

Որքան հպարտ պիտի զգար խնքվինք հայ ժողովուրդը երբ գիտնար որ դուք՝ այս տարի եւս ուխտած էք քալել ձեր նուիրական ճամբէն, ծառայել ձեր բոլոր սրտովը զեր ազգին եւ աւելի ամրացնել եղբայրական կապը հայ պատանիներու միջեւ, ստուարացնել սկառտական շարքերը՝ բոլոր ձեր տարեկիցները առնելով անոր մէջ:

Այս յոյսերով եւ հաւասարիքով, կուգամ շնորհաւորել ձեզի յառաջիկայ նոր տարին մաղթելով բարգաւաճում հայ սկառտութեան, ուրախ, երջանիկ եւ առողջ կեանք բոլորիդ:

ԱԶԳԱՅԻՆ ՍԿԱՌԻՏ ՊԵՏ՝
ԴՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ

ԱՅՍ ԹԻՒՐՎ

Կը վերջանայ ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ երրորդ տարին:

Ինչպէս Պոլիս, հոս եւս ըրինք մեր կարելին թերթը շարունակելու համար:

Կատարեալ եւ բոլորըն գոհացնող գործ մը տուած ըլլալու յաւակնութիւնը չունինք, սակայն ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ բարոյական կապ մը եղաւ Հ. Մ. Բ. Մ. ի բազմանդամ ընտանիքին համար, ան մեզի բերաւ բոլորին համակրանքը, ան լաւ կերպով արտայայտեց Հ. Մ. Բ. Մ. ի հետեւած ճամբան եւ հետապնդած բարձրագոյն նպատակը, եթէ չունեցանք նիւթական վարձատրութիւն, լիօրէն ունեցանք բարոյական գոհացում: Կը յուսանք որ յաջորդ չորրորդ շրջանին, նիւթապէս եւս պիտի աջակցին մեզի մեր շրջանները և ընկերները :

Այս առթիւ պարտք կ'իյնայ մեզ շնորհակալութիւն յայտնել Փարիզի Երջանային Վարչութեան, մասնաւորապէս՝ անոր նախագահին Պ. Նէրսէս Օհանեանի որ իր կարելին ըրաւ թերթին հրատարակութիւնը ապահովելու համար:

Սկզբնաւորութեան օժանդակեցին անոր նիւթապէս եւ բարոյապէս Պ. Պ. Գ. Պետրոսեան, Ք. Ժապունի, Հ. Աբելեան, Գ. Ճոլոշեան եւ տակաւին ուրիշներ, իսկ Պ. Ժիրայր Եազմուրեան անձնուիրաբար աշխատակցեցաւ Մարմնակրթանքի բաժնին՝ օտար մարզական և ֆութազոլի կեանքը տալով հոն ինչպէս նաև Ժիրայր Մինթանճեան, սկառտական նիւթերու մէջ: Իսկ Եղիպատոսէն՝ Պ. Հայկ Ճիզմէճեան, թերթիս հիմնադիրներէն մէկը, զովելի նախանձախնդրութեամբ մը հոգ տարաւ թերթը տարածելու իր շրջանին մէջ, մինոյն ատեն խրախուսելով մեզ իր զեղեցիկ տողերով, նոյնպէս Պ. Գ. Ռւշագլեան, որ պէտք եղած զոհողութիւնը ըրաւ առաջին երեք թիւերուն տպագրութեան համար:

Մեր շնորհակալութիւնները բոլորին:

Փարիզ

Խմբգր. եւ Վարչութիւն

50 Նոյ. 1950

ՀԱՅ ՍԿԱՌԻՏԸ

Le Gérant: DIRAN PERTCHEMLIAN

Imp. A-DER, 17, Rue Damesme. PARIS 13

ԿԱՐԵՒՈՐ

Կը ինգրութ մեր շրջաններէն եւ մասնաճիւղերէն որը օրին գրիել մեղի իրենց թղթակցութիւնները, մրցում, սկսուտական գործունեութիւն, հանդէս, դասախոսութիւն եւ յօդուածներ:

Սկսուտական, մարդական եւ վարչական գործունեութիւնները առանձին թուղթերու վրայ գըրել եւ նշանակիել ճիշտ ճակատը Ականոտական, Արազական, Վարչական մակագրութիւնով մը:

Գրել թուղթին մէկ երեսին վրայ մելանով եւ բաց առղերով, մանաւանդ քազաքի, անձերու եւ առար բառերը ԳՐԵԼ ՅՍՏԱԿ ԵՒ ՀԱՏ ՀԱՏ ԳԻՐԵՐՈՎ: Անընթեռնելի գրութիւնները նկատի չեն առնուիր:

Գրել կարճ եւ ամփոփ, աւելորդ տողերը խնայել, որովհետեւ թերթիս ժաւուը չի թոյլատրեր ևրկրոստական նիւթերու հրատարակութիւնը, նկատի առնալ որ «Հայ Ականոտ»ը բույր շրջաններուն կը պատկանի:

Մեղի դրկուած լուսանկարները պէտք է յատակ ըլլան եւ ետեւնները գրուած նկարին բացաւքը յատակ գիրով: Աշխատիլ գետպուած նկարներ դրկելու:

Սկսուտական եւ մորդական գեղեցիկ վէպեր եւ պատմուածքներ սիրով կը հրատարակուին, յարունակելի նիւթերէ զգոշանալ:

Այս թիւով կը լրանայ երբորդ տարեցրջանը որով բույր գործակալներ եւ շրջանները պէտք է մաքրեն իրենց հաշիւնները, աւելցած թիւեր եթէ կան վերագարձնել մեղի մինչև մէկամիս, հակառակ պարագային իրենց պարտին պիտի անցընենք անոնց արժեքքը: Եռյամէս այն բաժանորդները որոնք չեն ուղեր շարունակել պէտք է վերագարձնեն չորրորդ տարուան Ա. թիւը, ապա թէ ոչ բաժանորդ պիտի նկատուին: Իսկ անոնք որ չեն վճարած երբորդ տարին պարտին վերագարձնել ներկայ թիւը, դրկելով մեղի տոսով թիւի համար 30 ֆրանք: Այս կէտք իբր աղդաբարութիւն կը գրենք բույրին:

Հասցէի փափոխութիւնը անմիջապէս պէտք է իմացնել մեղի, չին հասցէն աւ գրելով այսպէս իՄ ՀԻՆ ՀՍՈՍՑԻՍ ԷՐ ՍՄ. . . իսկ նորը պիտի ըլլայ ԱՅՍ . . . (յատակ գիրով դրել):

ԲՈԼՈՐ ՇՐՋԱԾՆԵՐԸ եւ ՄՈՍՆԱՃԻՒԴԵՐԸ նախազէս պէտք է ճշգրին իրենց թերթին քանակը, աւելորդ թիւեր չպիտի հրատարակուին: Պէտք է գիտցնեն մեղի թերթին գործակալին անունը պաշտօնական նամակով եւ երաշխաւութեն գանձումը:

Յերեթին պարանակութեան, ձեւի եւ այլ ինուիրներու մասին եթէ ունին առաջարկներ, սիրով նկատի կառնուին, եթէ գործնական են:

Պակաս թիւեր ունեցողներ, եթէ հաւաքածոյ կը կազմեն, կրնան դիմել անմիջապէս, ստանաւ Համար, դրկելով 3 ֆրանք ամէն մէկ թիւին:

Յաջորդ շրջանին, բույր անոնք որ թերթի ծաւալումին եւ բաժանորդ գանձու համար պիտի աշխատին, բարոյական եւ նիւթական գնուհատում պիտի ստանան: Պայմանները մանրամասն պիտի ծանուցանենք յաջորդ թիւով:

Խմբագրութիւն և. Վարչութիւն
«ՀԱՅ ԱԿԱՆՈՒԾ»ի

ՈՒՆԵՑԷ՞

ՏԵՂԵԿԱՏՈՒ, Հ. Մ. Բ. Մ. ի Պուլկարիոյ Շրջանի ամսական հրատարակութիւն, պատկերազարդ սկսուտական եւ մարդական բովանդակութեամբ: Գին 5 լէվա հատը: Հասցէ՝ B. Balikdjian, 116, Rue Tzar-Boris, Sofia (Bulgarie)

ՕՐԱՅՈՅՅ, Պոտի 1931 տարւոյ: Հրատարակութիւն Հ. Մ. Բ. Մ. ի Պուլկարիոյ Շրջանին, սիրով գարգանկարով եւ պատկերով: Գին 20 լէվա, դիմել վերի հասցէին:

ԳՈՅԱՐԻԿ, Հրատարակութիւն Հ. Մ. Բ. Մ. ի Եփիականի շրջանի գայլիկներով: Պատկերազարդ եւ հետաքրքրական պատմուածքներով: Հասցէ՝ «Kailik» և օ Imp. «Sahag Mesrobian», 26, ch. Tewfik, Le Caire (Egypte):

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՊՈՄ, 1930 տարւոյ: Հրատարակութիւն Հ. Մ. Բ. Մ. ի Պուլմանիոյ Շրջանին, ճախ պատկերներով եւ կարեւոր թաւականներով, գին 10 ֆրանք, դիմել՝ «Հայ Ականոտ»ին:

Սկսուտական Carte Postaleներ, վեց զանազան տեսարաններ, սկսուտներու թղթակցութեան համար, Sérieս (6 համ) 1,50 ֆր. Հ. Մ. Բ. Մ. շրջաններուն եւ մասնաճիւղերուն համար, իսկ 50 անթիմ ուրիշներու համար: Դիմել՝ «Հայ Ականոտ»ի:

ԱՍԱՅԱՆՔ

ԱՄԲՈՇԾԱԿԱՆ ԵՐԿԵՐ, ԱՐԶԱԿ ԷԶԵՐ ԵՒ ՀԵՔԵԱԹՆԵՐ, ԽՈՎՔՆ ԶԱՐԴԱՐ-
ԻԱՆԻ, «ՆԱԽԱՏԱԼ ԳՐԱԳՀՄՆԵՐՈւ ԲԱՐԵԼՐԱՄԴՆԵՐ», ՄԱՏԵՆԱՉՄՐԲԻՆ Ա. ՀԱՅՈՐԸ: Գե-
ՂԱՐՄԵԿԱՏԱԼԻԱՆ ԼՊՂԲՐՈՎ, ՄԱՔՊՈՎ ՏԱԼԱԳԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԵՂԲԻԱԼԻԲԻՆ ԱՊԱՏԼԵՐՈՎԸ:

ՀԵԿԳԻԵՄԵ ԱՓԻՄԻ ՀՐԱՄԱՐՎԱԼՈՒԲԻՆ ՈՒՐԻՇ ՎՐՈՂՆԵՐՈւ ՎՈՐՃԵՐԸ ՈՐ ԱՓԻՄԻ ԼԱԳ-
ՄԵՆ ԴԱԼԻՐԱԼԻԱՆ ՎՐԱՄՈւԾՆ ՄԸ, ՀԱՅ ՄՈՔԻ ՃՈՂԱՐՃԱԼԸ:

ՍՊՅԱՆ ՀԱՅՈՐԸՆԵՐԸ ԿՐ յանձնարարենք մեր սկառամներուն իրենց մէջ զօրաց-
նելու համար ցեղային զգացումը եւ ծանօթանալու հայ հոգիին եւ մաքբին:

Գին 20 ֆրանք Ձրանայի, 25 ֆրանք Պալքաններու խոկ մէկ տոլար միւս եր-
կիրներու համար:

Դիմել՝ Dr. L. Krikorian, 126, Rue Edg. St. Denis, Paris 9e.

ՄԱՐԴԻ ՄԸ ՇԻՆԵՆՔ, Տօքթ. Լ. Գրիգորեանի, մարդկային, մարմնի կազմա-
խօսութիւնը, բնախօսութիւնը եւ համառոտ ծանօթութիւններ ախտաբանու-
թեան եւ առողջապահութեան մասին: Նկարներով եւ ժողովրդական լեզուով
գրուած՝ կարեւոր պակաս մը կր լրացնէ սոյն հասորը: Բոլոր Հ. Մ. Ը. Ը. Մա-
կաններուն համար կարեւոր է ունենալ:

Գին 20 ֆրանք (Ձրանա) խոկ 25 ֆրանք միւս երկիրներ:

Դիմել վերի հասցէին:

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ Տարեգիրքը Ա. տարի, 1931. «Շանթ» վորճակալու-
թեան հրամարակութիւնը, մեծագիր, պատկերազարդ, ճոխ, բովանդակութեամբ
եւ մաքուր տպագրութեամբ:

Վարչութիւն՝ Վ. Ռ. Թագւորեան, Խմբագրութիւն Մ. Մ. Պարսամեան:

Գրութիւններ՝ Հին եւ նոր վրողներու կողմէ, իրենց նկարներով կամ՝ դի-
մասուներներով: Հ. Մ. Ը. Ը. Գ. անդամները անոր մէջ պիտի զտնեն Միութեան
մասին հակիրճ եւ գեղեցիկ գրուածքը մը:

Դիմել՝ «Chanth» Arts et Lettre, 94, Rue Lafayette, Paris 9e:

ՄԱՐՄՆԱԿՐԹԱՆՔԻ, ՄԱՍԱԺԻ ԵՒ ԻՑՐՈԹԵՐԱՓԻՒ

ԳԵՂԵՑԻԿ, ՕԴԱՒԵՏ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆ ՍՐԱՀՆԵՐ

ԳԵՂԵՑԻԿ ԱՐՈՒԹԵԱՄԲ Մ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

L. P. F. A. կ պաշտօնական մարզիչ-դասախոս

Շուէտական մարզանք, ընդհանուր մասամբ, էսթէթիք եւ ֆասիալ,
մամագիւմներու կողմէ

ՀԱՐԿԱԿԱՐ ԲԺԿՈՒՅՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՔ ԶՐԻ
ՄՐԱՀՀ ԲԱՑ Է ԱՄԷՆ ՕՐ ԺԱՄԸ 8 ԷՆ 19

5, Place de Valois, Paris 1^e

Թէլէֆոն Central 43-47

Մեթրո Բալէ Բուայյալ